

5(710)

2025

Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Лусарар

Հանաչել զիմաստություն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ

ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԹԵՐԹ

Lusarar

ԵՐԱՋԱՆՔԻ ՀԱՍՑԵՆ՝ ԱՆՓՈՓՈՒՆ

Արդեն երկրորդ տարին է, Ար-
ցախի դպրոցներում չի հնչում
դպրոցական վերջին զանգը:
Ցավալիորեն արցախյան կրթո-
ջախները հիմա վերածվել են
լքված թռչնաբների, որտեղ
միշտ ուրախ ծիչ ու ծվվոց կար
և ապրվող երջանկություն: Բայց
եթե թռչնաբների տներըր սովո-
րաբար իրենք են ընտրում
իրենց սեզոնային կացարաննե-
րը, դպրոցականների պարագա-
յուն մույնը չես կարող ասել:
Նրանք պարտադրյալ հեռացել
են ազերական գեղենից և
հույսով ապաստանել Մայր Հա-
յաստանի ապահով գրկուն: Դա
լավ է, որ կա հայրենիք և հանգր-
վանելու տեղ, որտեղ կարող ես
ապրել ու արարել: Բայց ամենա-
լավ վայրն այն է, ուր մայրական
օրորն է քեզ սիրով պարուրել,
որտեղ առաջին անգամ հաղոր-
դակցվել են մեարդայան այբու-
բենի տառերին, և որտեղ հուշե-
րը քեզ մշտապես ներկայի մեջ
են պահում...

Հայաստանի հարյուրավոր
կրթօջախներում այսօր գրական
լեզվին զուգահեռ՝ տեղական
բարբառների հետ հնչում է նաև
Արցախի բարբառը: Հնչում է
նրանց շուրթերով, ովքեր իրենց
հետ բերել են մի բուռ կարոտ, և
որոնց թախծոտ աչքերում միշտ
մի անանուն որոնում կա: Նրանց
համար դպրոցական զանգը
հնչում է արցախյան իրենց կր-
թօջախի հարազատ ելևէջներով՝
իբրև վերադարձի անլռելի կանչ:

Ուրախալի է, որ Արցախից
բռնատեղահանված դպրոցա-
կանները կարողանում են ուս-
ման բարձր առաջադիմություն
ապահովել, իսկ նրանց բախ-
տակից ուսուցիչները՝ մասնա-
գիտական պատշաճ հմտու-
թյուններ դրսևորել: Դա արդ-
յունք է նաև այն բանի, որ հա-
յաստանյան կրթօջախներում
հարազատորեն են վերաբեր-
վում նրանց, հնարավորություն
տալիս արագ ինտեգրվել նոր
իրողություններին: Ասել է թե՛
ցավը կիսելով՝ բերկրալու էներ-
գիա են հաղորդում իրենց տու-
ժած հայրենակիցներին:

Ոմանց համար դպրոցական
զանգը վերջինն է հասուն կյանք
մտնելուց առաջ, ոմանց համար
էլ՝ հանրակրթության հերթական
աստիճանը հաղթահարելու
վստահ քայլ: Կյանքի ճանա-
պարհներն ուն որտեղ էլ տանեն,
թող միշտ կանաչ լինի անցնելիք
ճանապարհը, իսկ երազանքը՝
նույն անփոփոխ հասցեն ունե-
նա:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

Վարդան Հակոբյան

ՊՈՒԵՄ ԻՄ ՄԱՍԻՆ, ԿԱՄ՝ 24-Ե ԱՆՅ՝ 81 ՐՈՊԵ

(հատված)



3. ՀԵՌՈՒՆ ԻՍԸ ԶԵ, ՔԱՆԻ ԴԵՌ ՆՐԱ
ՀԱՄԱՐ ԵՍ ԻՆՉ ԶԵՄ ՋՈՂԵԼ

Հայոց պատմության թանաքը չչորացած, այն
կրկին դառնում է ներկա, մեր
պատմությունը չի անցյալանում:
Վիշտ - ահա մեր միաբանության միակ
մերանը: Ցավը մեզ հավաքագրում է,
խիճը՝ ցրում: Եթե
Կայենը Կայեն է՝ Աբելին սպանելու, ապա
Աբելը եւս Կայեն է՝ թույլ լինելու
եւ սպանվելու համար: Այդ դեպքում՝
ո՞ր է Աբելը: Հասարակ, շատ
հասարակ մի բան. «Պիտի պարզապես
ուժեղ լինել»: Ահա ամբողջը: Ի վերջո՝
մորթելուց ոճրական է մորթվելը: Չլինե-
ր թռչքն այնքան գեղեցիկ ու անպաշտպան,
համոզված եմ, որ
չէր հորինվի կյանքում եւ ոչ մի վանդակ:

Սերվանտեսի քաղցը՝
որպես լավագույն խոհարար,
մեզ արդեն ուտում է: Սեւ՝
որպես անպատուհան պատ:
Անձրեւի մեջ՝ մթան անլուծելի
փոշեհատիկներ: Գետերը չեն կարող

տարածքների ճշգրիտ սահմանումը տալ՝
որքան էլ անկողմնակալ լինի ընթացքը,
թեւեւ, ի վերջո, նրանք հասնում են
ճիշտ այնտեղ, որտեղից
ճանապարհ են ընկել: Եվ եթե
ժամանակին հատվեր թաթը թալեաթների, իմ
մեջ
խոսում եմ Սողոմոն Թեհլերյանի եւ ինձ հետ,
ապա հայոց Մայիսը կգար
ավելի վաղ, քան Ապրիլը եղեմնական:
Հայրենիքը չէ հայրենիքը,
հայրենիքը
վաղն է:

Տառապանքի սահմանումը գուրկ է
բառերից, ավելին՝
տարածություն ու ժամանակից (որովհետեւ
տարիները չեն գնում, տարիները գալիս են: Եվ
ես
բացառիկ եմ, ուղղակի՝ ապուշ):
Բռնի Սիստոմոլուա Նեխամայի ձեռքը եւ
նրանով
բացի անցյալը, չէ որ այն եւս կարող է
կորցնել իր պիտանելիության ժամկետը:
Եվ երբ պատերազմ չէ, դեռեւս
խաղաղություն չէ,
նույնիսկ՝ խաղաղություն չէ,
երբ արդեն խաղաղություն է, քանզի
խաղաղությունը բոլոր-բոլոր
պատերազմներից ամենազարհուրելին է:
Սուք ու լույսը մույն
հերթափոխում են իմ շուրջ: Ես
ծեզանից մեկն եմ, որը բոլորովին
ծեզանից մեկը չէ: Բացարձակապես:

Պոեզիայի գերնոր մաքառումներում երկինքը
աճում է, եւ ես մեկ-մեկ Ջոնաթան
Լիվինգսթոն ճային
հանդիպում եմ

Այստեղ ու Այժմ կոչվող տարածքում:

Իսրայելում Արցախի կարոտից զոհված
երգահան Էդուարդ Ղազարյանը
թողել է մի կտակ. «Ստեփանակերտցի
Գարիկ Բալասանյանին եմ նվիրում
իմ «Ակորդեոնը», որի մեջ մի մեղեդի կա, որ
ոչ ոք դեռ չի հնչեցրել, խնդրում եմ, այն
մվագել
մեր բարձրիկ երկրի բոլոր անկյուններում»:
Նվագել, որ մեր զոհերը
չզոհվեն երկրորդ անգամ: Իսկ լքել
հողը՝ արյամբ մաքրված, նշանակում է
ոտնահարել իրավունքները նահատակների:
Մանավանդ՝ մենք լավ գիտենք միասին
զոհվելը,
ուրիշ է, որ միասին ապրելը դեռ չենք սովորել:
«Հայր մեր, որ երկինս ես, սուրբ եղիցի անուն
քո...»:
Ես չեմ ուզում բառը դառնա
մահապատիժը մտքի: Եվ
այն կարծիքին չեմ, թե քնելու
ամենահարմար տեղն ուղտի ականջն է:
«Բա հասունացած մեղո՞ւն» չհասունացած
վարդի մեջ», - ասում է
ամառը: «Բա դափնու տերեւը՞», -
փեշիցս ձգում է մրջյունը: Նա,
ով գիտե, նշանակում է՝
հարգում է դիմացինին եւ
չի աճեցնում չբեր բառերի բազմություն:

Մեծ լեռը պիտի անընդհատ բարձրանա, որ
կարողանաս հասնել
փոքրերին: Մենք
այնքան ենք հեռացել մեզանից, որ
մեր աչքում Փոքր Սիերն արդեն
այնտղորակմանի կարգավիճակ ունի: Իսկ
կրկնել ուրիշին, նշանակում է՝
անհարգելի բացակայել:
Հրթիռի նախատիպը քարայրն է:

ԱՐՑԱՒՅԻ ԳՐՈՂԻ ԿԱՐԾԻՔԸ «ԼՈՒՍԱՐԱՐ»-Ի ՄԱՍԻՆ

Արցախցի նշանավոր բանաստեղծ Ռոբերտ Եսա-
յանը, որը ներկայումս բնակվում է Գյումրիում, «Լու-
սարար»-ի հավատարիմ ընթերցողներից է: Վերջերս
նա մեր թերթի մասին գրավոր կարծիք է արտահայ-
տել՝ հնչեցնելով գնահատականներ, որոնք հաճելի
լինելով հանդերձ՝ նաև պարտավորեցնող են:

Ներկայացնում ենք բանաստեղծի՝ խմբագրու-
թյուն ուղարկած կարծիքը հեղինակի ձեռագրով:
Միաժամանակ՝ Ռոբերտ Եսայանի նորահրատարակ
գրքի մասին գրախոսական և մի փունջ նրա ստեղ-
ծագործություններից (տե՛ս էջ 6-7):

«Լուսարար» թերթի էջերից հանձնում է
Հակոբյանի «Ներկայիս»-ի լուսարարին
և կոթակաճ ուժի նվաճումներով: «Լու-
սարար»-ը թերթ չէ՝ ժուրնալ. նա ամբարտա-
պալանել է՝ պատանջից ուժի մեջ
Դիմաց: Ողբ կամարը է, որով անցնում
են՝ անունը՝ Ներկայիս, համաճարակ, որ բաշ-
ճարարյա հայոց կրկր-ամբարը շնչ
շուշով պիչի Բառազի Ներկայիս
Լուսարարով:

Ռոբերտ Եսայան
05. 05. 2025 թ. Ֆ. Զյանի

ՈՐՊԵՍ ԲԱՐԵՄԱՂԹԱՆՔ

Արցախցի ուսուցիչներից շատերը հա-
վանաբար նաև Անտուան դե Սենտ Էքզյու-
պերիի այս խոսքերով մեծ կյանք կճանա-
պարհեն դպրոցն ավարտող իրենց սանե-
րին:

Աստված իմ, ես չեմ խնդրում հրաշքներ
և տեսիլքներ, ես խնդրում եմ ուժ՝ ամեն օր-
վա համար: Սովորեցրո՛ւ ինձ փոքրիկ քայ-
լերի արվեստը: Դարձրո՛ւ ինձ հետևողական
և պատրաստակամ, որպեսզի օրվա միա-
պաղաղության մեջ ճիշտ ժամանակին
կանգնեմ բացահայտումների և փորձի
առջև, որոնք ինձ կհուզեն:

Սովորեցրո՛ւ ինձ ճշգրիտ տնօրինել իմ
կյանքի ժամանակը: Նվիրիր ինձ ներքին
ծայն, որպեսզի առանձնացնեմ այն, ինչ
պետք է անել առաջին և ապա երկրորդ հեր-
թին:

Խնդրում եմ քեզանից չափավորություն
և զսպվածություն, որպեսզի իմ կյանքի ըն-
թացքում չթռչեմ և չսողամ, այլ կարողանամ
ծրագրել իմ օրը՝ օրվա ընթացքում, կարո-
ղանամ տեսնել բարձունքներն ու հեռունե-
րը:

Օգնիր ինձ հասկանալ, որ երազանքնե-
րը չեն կարող օգնել. ո՛չ անցյալի և ո՛չ էլ
ապագայի մասին երազանքները: Օգնիր
ինձ լինել այստեղ և հիմա, ընդունել այս ըո-

պեն որպես ամենակարևորն ու գլխավորը:

Պահպանիր ինձ այն միամիտ հավա-
տից, որ այս կյանքում ամեն ինչ պետք է
հարթ լինի: Տո՛ւր ինձ հստակ գիտակցու-
թյուն, որ դժվարությունները, ծախողումնե-
րը, պարտությունները և անհաջողություն-
ները միայն կյանքի բնական բաղադրիչ
մասն են, որոնց շնորհիվ մենք աճում ենք ու
հասունանում:

Հիշեցրո՛ւ ինձ, որ հաճախ սիրտը վիճում
է բանականության հետ:

Անհրաժեշտ պահին ուղարկիր ինչ-որ
մեկին ինձ մոտ, ով քաջություն կունենա
ասել ինձ ճշմարտությունը, բայց ասել այն
սիրելով:

Ես գիտեմ, որ շատ խնդիրներ որոշվում
են, երբ ոչինչ չես ձեռնարկում: Այդ դեպքում
տուր ինձ համբերություն: Դու գիտես, թե
մենք ինչքան շատ ենք զգում ընկերության
կարիք: Թույլ տուր արժանի լինել ճակա-
տագրի ամենահրաշալի և քնքուշ այդ նվե-
րին: Դարձրո՛ւ ինձ մարդ՝ ունակ թակելու
այն դռները, որոնք ամենամեղքնում են:
Պահպանիր ինձ այն վախից, որ ես կարող
եմ ինչ-որ բան բաց թողնել իմ կյանքում:

Տո՛ւր ինձ ոչ թե այն, ինչ ես խնդրում եմ
ինձ համար, այլ այն, ինչն իսկապես անհ-
րաժեշտ է ինձ: Եվ խնդրում եմ նորից՝ սովո-
րեցրո՛ւ ինձ փոքրիկ քայլերի արվեստը:

ՎԻՉԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ ՌԱԶՄԱՃԱԿԱՏԻՑ



Աշխարհակործան Երկրորդ համաշխարհային պատերազմը՝ մարդկության պատմության մեծագույն այդ աղետը, խլել է 60 միլիոնից ավելի մարդկային կյանքեր:

Չնայած այն հանգամանքին, որ Հայաստանը պատերազմի թատերաբեմ չդարձավ, այնուամենայնիվ, հայ ժողովուրդը այդ պատերազմին մասնակցեց 600 հազար ռազմիկներով, որից 300 հազարը՝ խորհրդային Հայաստանից: Պատերազմի ընթացքում ռազմաճակատներում զոհվեց ավելի քան 200 հազար հայ զինվոր:

Ամուրաճալի փաստ է, որ Հայրենական մեծ պատերազմում «խորհրդային միության հերոսի» կոչում են ստացել 108 հայ, որից 4-ը՝ խորհրդա-ֆիննական պատերազմում, 101-ը՝ Հայրենական մեծ պատերազմում, 3-ը՝ հետպատերազմյան տարիներին կատարած սխրանքների համար:

Բավական է հիշել աննկուն օդաչու, ԽՍՀՄ կրկնակի հերոս Նելսոն Ստեփանյանին, որը 259 մարտական թռիչք է կատարել՝ չերկնչելով, որ այդ ճախը կարող է ընդհատվել:

Այս չարաղետ ու կործանարար պատերազմին իր մասնակցությունն է ունեցել նաև հայ ժողովրդի համար սրբություն դարձած, հանճարեղ Հովհաննես Թումանյանի ավագ որդու՝ Մուշեղի միակ որդի Վիգեն Թումանյանը, որը վերջին հույսն էր Թումանյանների տոհմի շարունակության:

Վիգեն Թումանյանը ծնվել է 1920 թվականի օգոստոսի 30-ին: Գեղեցիկ տղան ժառանգել էր լեհուհի մոր բաց գույներն ու հոր դիմագծերին բնորոշ հայկական առանձնահատկությունները: Հովհաննես Թումանյանը տեսել է իր երեք թոռներին (ընտանիքում եղել է 7 թոռ): Երեք տարեկան Վիգենին նստեցնում էր ծնկներին՝ թույլ տալով տեղաշարժել գրասեղանի մատիտները, գրիչները, արծանիկները: Նկատելով, թե ինչպիսի հետաքրքրությամբ է տղան ուսումնասիրում այդ իրերը՝ Թումանյանն ասում էր. «Նա շատ բանիմաց է, շատ բանի կհասնի կյանքում: Տեսնում եք, թե ինչ ուշադրությամբ է նա ուսումնասիրում կյանքը, առարկաները... Նա ջերմացնում է իմ սիրտը, հավատ է ներշնչում կյանքի հանդեպ...»:

Վիգենը, ինչպես և իր քույրերը՝ Անահիտն ու Նադեժդան, գերազանց տիրապետում էր հայերենին, իսկ ավելի ուշ ուսումնասիրեց նաև

գերմաներենը, որը նրան պետք եկավ պատերազմի ժամանակ: Վիգենը վաղ հասակից սկսեց բանաստեղծություններ գրել, շատ գրքեր էր ընթերցում, պապի բանաստեղծություններն արտասանում: Տանը նա բոլորի սիրելին էր:

Ուսումնառության ընթացքում շատ էր սիրում մաթեմատիկա ու ֆիզիկա առարկաները և ավարտելով դպրոցը՝ ընդունվեց Վրաստանի արդյունաբերական ինստիտուտ: Իր գիտելիքների շնորհիվ նրան գործուղեցին ռազմական մաթապատրաստական դասընթացների, որի ժամանակ էլ սկսվեց պատերազմը:

1940 թվականի հունվարին՝ 18 տարեկանում, նրան զորակոչեցին բանակ: Կանգնեց ընտրության առջև՝ գնալ ուսումնարան, մնալ Օստրոգոժսկի պահեստային գնդում կամ գնալ ռազմաճակատ:

Ուշագրավն այն էր, որ նրա անունը զորակոչիկների ցուցակում չկար: Թումանյանի թոռնուհին՝ Իրմա Սաֆրազբեկյանը, հետագայում մեկնաբանում է, թե ինչպես է դա եղել: Մեքենագրուհին, որ հայուհի է եղել, բաց է թողել նրա ազգանունը՝ հասկանալով, թե ում թոռն է: Բայց Վիգենը, ցանկանալով ապացուցել, որ իր հայրը ժողովրդի թշնամի չէ (Թումանյանի երեք որդիները՝ Մուշեղը, Համիկը և Արեգը, ծերբակալված էին), խնդրել է ուղարկել ռազմաճակատ՝ ականանետային դասակի հրամանատարի պաշտոնում: Երկու հորեղբայրները՝ Համիկն ու Արեգը, զնդակահարվել են, իսկ հայրը՝ Մուշեղը, կաթված է ստացել ճամբարում: Նա կարող էր մնալ ուսումնարանում կամ պահեստային գնդում, բայց չմնաց:

Թե ինչպիսի երիտասարդ է եղել Վիգենը, պատմում են ռազմաճակատից տուն ուղարկած նրա նամակները. «Հանդիպելով բռնության՝ ուզում եմ քանդել վիրակապերս, կրկին մեկնել ճակատ...»:

Վիգենը կռվել է Կորոշիլովկայում, Ստալինգրադում, Ռոսլավլում, Մոսկվայի տակ և այլուր:

1941 թվականի օգոստոսին վիրավոր Վիգենին ուղարկեցին Կիսլովոդսկի զինվորական հոսպիտալ: Հարազատներին դժվարությամբ հաջողվեց գտնել նրան՝ վիրակապված ձեռքով:

Նույն ամսին նրա մայրը՝ Մարիա Արխիլևնան, Թբիլիսիից եկավ որդուն տեսության ու լուսանկարվեց նրա հետ: Դա, իրոք, անմոռանալի օր էր: Ո՞վ կարող էր մտածել, որ դա նրանց վերջին հանդիպումն էր: Վիգենը շտապում էր ռազմաճակատ: «Միայն այստեղ է հնարավոր իսկական հայրենասիրությունը», - ասում էր նա՝ ուղղելով ձեռքի վիրակապը: Հոսպիտալից հետո նա գրել էր. «Անցա հանձնաժողովը: Առողջ եմ... ուզում եմ արագ հասնել ռազմաճակատ»:

Իրմա Սաֆրազբեկյանը գրում է, որ վերջին նամակը Վիգենից եկավ 1941 թվականի հոկտեմբերի 2-ին Մոսկվայի մատույցներից, իսկ հետո՝ երկար-երկար տարիների լռություն: Վիգենի մասին հարազատների հարցումներն ունեին մեկ պատասխան՝ անհետ կորել է:

Ում ասես, որտեղ ասես, դիմեցին, որոնեցին, որոնումներին միա-

ցավ նաև մարշալ Հովհաննես Բաղրամյանը, բայց նա էլ անգոր գտնվեց:

Մայրը՝ Մարիա Սոկալսկայան, հույսը չէր կորցնում, մայրական սիրտը հուշում էր, որ նա կարող է թաղված լինել Լենինգրադի մատույցներում: Եվ ճիշտ էր նա:

Երկար որոնումներից հետո Արեգը՝ Թումանյանի ծոռը, Լենինգրադի զինվորական Պրեոբրաժենսկի գերեզմանատանը գտավ Վիգենի գերեզմանը: Պաշտոնական փաստաթղթերում նշվում է միայն, որ Վիգենը մահացել է 1942 թվականի հուլիսի 15-ին վերքերից:

Եվ այսպես ռազմի դաշտում մարեց մի հրաշալի երիտասարդի կյանք, որի հետ մարեց նաև Թումանյանների վերջին հույսը: Նա մեկն էր այն հայ քաջորդիներից, որի համար առաջնայինը պատիվն ու նվիրումն էր:

Վիգենի թողած նամակները խոսում են այն մասին, թե այդ նուրբ ու քնքուշ սիրտ ունեցող երիտասարդը որքան լուսավոր անհատականություն է եղել՝ միշտ տոգորված լավատեսությամբ, հարազատների նկատմամբ տածած անսահման հոգատարությամբ և ուշադրությամբ, նրանց միջև ամուր, մարդկային պարզ ու մաքուր հարաբերություններ տեսնելու ցանկությամբ, ապա-



գայի հանդեպ ունեցած լուսապայծառ երազանքների շնայությամբ: Հավանաբար մարդկային այս վեհանձնության շնորհիվ է, որ նա այդքան սիրված է եղել բոլորի կողմից:

Ահա 1941 թվականի օգոստոսի 26-ի թվագրությամբ նամակից մի հատված, որ գրել է Կիսլովոդսկից իր տատիկին՝ Օլգան Թումանյանին. «Բարև քեզ, իմ սիրելի տատիկ ջան: Այսօր ստացա քո նամակը և շատ ուրախացա: Երեկ ստացա մայիի նամակը և քո նկարը: Վերջապես երեկ եկավ մաման: Մամի գալը շատ անսպասելի էր: Առաջից ստացա հեռագիր, թե՛ դուրս եմ գալիս, իսկ հետո գրում աս. «Համբուրում եմ Վիգենին, լավացիր, միացիր (կապ հաստատել) Սեդայի հետ. մամա»: Ես կարծեցի, որ դժվար է գալը, և չի գալ: Եղ մտքով նստել եմ և սկսել եմ քեզ նամակ գրել: Մեկ էլ տեսնեմ՝ կանչում եմ, թե

մայրդ (առաջից ասացին քույրդ) եկել աս, կանչում աս: Համա մամի գալը շատ անհաջող եղավ: Առաջին րոպեից տոմսի մասին էր մտածում:

Եղ օրը 4-ից մինչև 7-ը մնաց: Մեկել օրը եկավ, մի չորս ժամ էլ էղ օրը մնացինք եղտեղ: Հոսպիտալից թուղթ վերցրավ՝ տոմս ճարելու համար և ցտեսություն ասինք, գնաց, որ գնաց՝ տեղ չէի գտնում ինձ համար, զոռով էի ինձ պահում: Ուզում էի հագնվեմ, գնամ վակզալ, տեսնեմ որտեղ աս՝ կարգին խոսենք, ճանապարհ գցեմ: Հիմի չգիտեմ, թե որտեղ աս, համա գնացած չլինի: Ինչ բախտ կլինի, որ էլի տեսնեմ... Իմ վերքս արդեն լավացել աս: Փողի մասին մի մտածի, էղ ինձ պետք չի, ավելի լավ դուք եղտեղ լավ ապրեցեք, թե չէ ես լավ եմ: Ապրեցեք միասին, սերով, հանգիստ: Դրանից շատ ի՞նչ կուզենամ: Հիշեք ժողովրդական իմաստությունը. «Ծառի ոստերը առանձին-առանձին հեշտ է կոտրել, իսկ միասին՝ ոչ»: Լավ եղեք»:

«Բարև, սիրելի Մուրմոնչկա. Մայրիկից և տատիկից նամակներ ստացա, բայց քեզից ոչինչ չկա: Ինչու՞ չես գրում: Միգուցե արդեն մոռացել ես: Բայց ես դեռ չեմ մոռացել: Ես, նույնիսկ, քո մոռաթիկն (լուսանկար) ունեմ, որտեղ դու Նադայի հետ ես: Ինձ մոտ Մուսենկան էր եկել: Նա քեզից փոքր է, բայց արդեն գիտի կարդալ, գրել և, նույնիսկ, գերմաներեն խոսել: Դու էլ սովորիր, Մուրմոնչկա: Դե, առողջ եղիր, լավ սովորիր, օգնիր տատիկին: Համբուրում եմ քեզիկդ: Ողջույններ հաղորդիր բոլոր երեխաներին»:

«Բարև, մայրիկ ջան: Ես համա գիտեմ, ինչպես Թբիլիսիից մեկնելիս: Մայրիկ, դու մի տխրիր: Այսօր նոր գեմք ստացանք, նոր համազգեստ, վա՛ր թշնամուն: Այս օրերի ընթացքում ձեզ երրորդ նամակն եմ գրում, իմ ալբոմում ձեր մոռաթիկներն են: Ցտեսություն: Վիգեն»:

«Բարև, իմ հարազատներ. Ես, ինչպես միշտ, առույգ եմ, անհանգստանալու կարիք չկա: Մենք շուտով Հիտլերի պոչը կխուզենք: Համբուրում եմ ձեր մոռաթիկները: Վիգեն (Գուգա)»:

Թումանյանի թանգարանի ավագ գիտաշխատող Սուսաննա Աղանյանը, որ քաջատեղյակ է Վիգենի նամակներին, ներկաների առջև բացում է երիտասարդի հոգու անեզր աշխարհը՝ բացահայտելով նրա ականակիտ մաքրությունն ու պարզությունը: Ու քանի որ նա տարիներ անց հնարավորություն է ունեցել անձամբ հանդիպելու Վիգենի մորը, ահա թե ինչ է պատմում.

«Տարիներ շարունակ որդու ճակատագրով անհանգստացող մոր ջանքերն ապարդյուն էին անցնում: Նրան մնում էր միայն խնամքով պահել որդուց ստացած նամակները, անվերջ կարդալ, բազմիցս արտագրել՝ ցողելով դրանք արցունք-

Նրան մնում էր միայն խնամքով պահել որդուց ստացած նամակները, անվերջ կարդալ, բազմիցս արտագրել՝ ցողելով դրանք արցունք-



ներով. «Ես, կորցնելով ամուսնուս և որդուս, թռչակի անցնելով, տրամորեն անց եմ կացնում կյանքիս վերջին օրերը: Բայց երբեմն, մարդկային կայծերի նման, իմ հոգում բողբալառվում է անցյալի դժվարին երջանկության լույսը, և կյանքը հառնում է դուստրերիս ու թոռներիս հանդեպ սիրուց և լցվում հույսերով, որ նրանց կհաջողվի գեղեցիկ, մարդկանց պիտանի մի բան իրագործել, որն ինձ չվիճակվեց անել իմ խառնակ կյանքում...»: Երբ կարդում եմ այս տողերը, աչքիս առաջ է գալիս այդ առաքինի կնոջ կերպարը: Երջանիկ հնարավորություն եմ ունեցել հանդիպել նրան իր կյանքի մայրամուտին, երբ Թամար Թումանյանի կողմից գործուղվեցի Թբիլիսի՝ արխիվներում աշխատելու համար: Նա ապրում էր Թումանյանների վերջին բնակարանում իր դստեր՝ Նադեժդայի ընտանիքի հետ: ... Մեղմ բռնեց ձեռքս, հարցրեց անունս և նշեց, որ մեր անունները նման են, խնդրեց, որ պատմեմ թանգարանի ու աշխատողների մասին, և ողջույններ ուղարկեց իր սիրելի Թամարին: Վերջում ասաց, որ հպարտ և երջանիկ պիտի լինեմ, քանի որ ծառայում եմ ամենամեծ հայի թանգարանում: Երկու տարի անց՝ 1989 թվականին, նա հեռացավ այս կյանքից, որ երկնքում միանա իր այդքան սիրած ամուսնուն և որդուն»:


Թումանյանների հետ կապված ոչ մի մանրուք չի վրիպում թանգարանի տնօրեն Լուսինե Ղարախանյանի աչքից, որը մեծ ջանասիրությամբ ու եռանդով մատաղ սերնդին է փոխանցում այն բարձրարժեք գաղափարները, որով դարեր շարունակ պիտի կրթվեն մեր սերունդները՝ պետական մտածողությամբ հայրենիքի պաշտպան դառնալու համար: Օգտագործելով իր բոլոր հնարավորությունները՝ դպրոցականներին, քոլեջների ու բուհերի ուսանողներին ներքաշում է Թումանյանի տիեզերական անդաստանը ու թռչեքի թևեր պարզելով՝ ուղղորդում նրանց ճախը դեպի թումանյանական արժեքները, դեպի Անհունը...

ԵՐԱՆՏԱՎՈՐՆԵՐ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄՊԵՆԴԻԱՐՅԱՆԻ ԵՐԱՆՏԱԳԵՏ ԱՇԱԿԵՐՏԸ

(Կորյուն Անանյան-120)

Մայիսի 7-ը հայ ազգային սիմֆոնիկ երաժշտության հիմնադիր, կոմպոզիտոր Ալեքսանդր Սպենդիարյանի հիշատակի օրն է, ու դա ևս մի առիթ էր, որ նրա անունը կրող Օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի բակում՝ նրա գերեզմանի մոտ, համախմբեր երաժշտասեր հասարակության անդամներին ու երաժշտական տարբեր օջախների ներկայացու-



ցիներին՝ խնկարկելու, ծաղիկներ խոնարհելու և ևս մեկ անգամ հարգելու մեծ կոմպոզիտորի հիշատակը: Ինչպես Ալ. Սպենդիարյանի տուն-թանգարանի տնօրեն Մարինա Օթարյանն ասաց իր ողջույնի խոսքում, բոլորը հավաքվել են այդտեղ՝ մեծանուն կոմպոզիտորին ասելու իրենց շնորհակալական խոսքը: «Շնորհակալություն այն մեծ ավանդի, այն ամուր հիմնաքարի համար, որի հիման վրա այսօր մենք ունենք ազգային բարձրարվեստ երաժշտություն: Ասում են՝ Սպենդիարյանը որտեղ էլ լիներ, իր շուրջն էր համախմբում մարդկանց՝ հիմնականում երիտասարդների»:

Օրը հիշարժան էր ոչ միայն մեծ երախտավորի հիշատակը ավանդաբար հարգելու, նրան մեծարելու առումով, այլև որ 97 տարի անց հնչեց Ալեքսանդր Սպենդիարյանի երախտագետ աշակերտ Կորյուն Անանյանի գրած «Ազո քայլերգ»-ը:

1928 թվականի մայիսի 7-ին հաճախելով կոմպոզիտորը կնքեց իր մահկանացուն: Դա համազգային մեծ կորուստ էր, որն ավելի դիպուկ բնորոշել է Ռոմանոս Մելիքյանը՝ գրելով. «Մի աղբյուր ցամաքեց, որից ծով պիտի ծնվեր»:

Ալեքսանդր Սպենդիարյանի նվիրյալ ուսանողները՝ Սերգեյ Շաթիրյան, Լևոն Խոջահանյան, Կորյուն Անանյան, որպես ինքնադասակարգված խումբ մեծ կորստի, գրեցին «Ազո քայլերգ»-եր՝ իրենց հեղինակավոր ուսուցչի՝ Ալեքսանդր Սպենդիարյանի պայծառ հիշատակին: Ուղիղ 97 տարի անց՝ 2025թ. մայիսի 7-ին, լավեց Կորյուն Անանյանի «Ազո քայլերգ»-ը, որը կատարեց «Մեղեդի» լարային քառյակը: Այն առաջին անգամ կատարվել է մեծ կոմպոզիտորի հոգեհանգստին:

Հայաստանի կոմպոզիտորների միության նախագահ Արամ Սաթյանը նշեց, որ հայ կոմպոզիտորական դպրոցի հայտնի անուններ վաղուց դուրս են եկել միջազգային հարթակների, որոնց մեջ է նաև Ալեքսանդր Սպենդիարյանը:

Երաժշտագետ Դավիթ Ղազարյանն այն միտքն արտահայտեց, որ այդ օրը սգո օր չէ, այլ փառքի ու հպարտության օր: Հավաքվել են՝ իրենց խոնարհումը բերելու «Ամաստ» օպերայի հեղինակին: Բոլորը պարտավոր են պահպանել նրա թողած

ժառանգությունը և շարունակել լավագույն ավանդույթները: Սպենդիարյանը հիմք դրեց մեր ազգային պրոֆեսիոնալ երաժշտությանը:

Երաժշտական աշխարհի ներկայացուցիչները և հրավիրվածները «Ազո քայլերգ»-ը ունկնդրելուց հետո խնկարկեցին ու ծաղիկներ խոնարհեցին մեծ երաժշտի շիրիմին, այնուհետև ուղևորվեցին նրա տուն-թանգարան, որտեղ կոմպոզիտորի երախտագետ ու նվիրյալ ուսանող, երաժիշտ-կատարող Կորյուն Անանյանի (ծննդով՝ Շուշիից) կյանքի ու գործունեության մասին զեկուցումով հանդես եկավ թանգարանի գիտաշխատող Նինա Հակոբյանը: Մտահղացումը հայ երաժշտագետ, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր, Հայաստանի արվեստի վաստակավոր գործիչ Արմեն Բուդաղյանինն է:

Կորյուն Անանյանը սերում է Արցախում հայտնի մելիքական՝ Շահնազարյանների տոհմից, որն աշխարհին տվել է 100-ավոր գորավարներ, հայտնի բժիշկներ ու գիտնականներ: Անանյանների ընտանիքում կար հինգ երեխա: Կորյունը շարունակել է իր մտավորական ընտանիքի լավագույն ավանդույթները:

Սովորել է Շուշիի ռեալական ուսումնարանում, որտեղ դասավանդում էին ժամանակի հայտնի մանկավարժները:

1920 թվականին Շուշիի ջարդերի ժամանակ Անանյանների ընտանիքը մազապուրծ ազատվում և տեղափոխվում է Հայաստան, բայց առանց Կորյունի, որի մասին ոչ մի տեղեկություն չունեին: Բարեբախտաբար շուտով հայտնվում է Կորյունը, ու խաղաղվում է նրա ընտանիքի անդորրը:

Ունենալով երաժշտական ծիրք՝ կրթություն է ստանում Երևանում: Իմիջիայլոց, 1960-ական թվականներին նկարահանված «Նվազախմբի տղաները» ֆիլմի փոքրիկ Կորյունը մարմնավորում է հենց Կորյուն Անանյանին:

Սովորել է Երևանի պետական կոնսերվատորիայում, որտեղ նրան դասավանդել են Ալ. Սպենդիարյանը, Արտեմի Այվազյանը:

1928 թվականին տեղափոխվում է Լենինգրադ, ընդունվում կոնսերվատորիա: Այստեղ էլ ընտանիք է կազմում ու հաստատվում: Որպես թավջութակահար աշխատում է Լենինգրադի ռադիոկոմիտեի սիմֆոնիկ նվագախմբում:

1941-ին սկսվում է Մեծ Հայրենական: Երբ սկսվում է լենինգրադյան բլոկադան, հարազատները հորդորում են, որ տեղափոխվի Հայաստան, սակայն նա չի լսում այդ հորդորները՝ պատասխանելով. «Եթե բոլորը հեռանան, ո՞վ պետք է պաշտպանի Լենինգրադը»: Ու նա մնում է քաղաքում՝ մինչև վերջ «Ճաշակելով» բլոկադայի սահմեկեցուցիչ ու սարսափելի պայմանները:

Մոտ 800 օր տևած բլոկադայի պայմաններում նա չի կորցրել հավատը, հույսը, երբ

շատերին թվում էր, թե այդ ծանր պայմաններում երաժշտությունը ավելորդ մի բան է, Կորյուն Անանյանն զգում էր, որ մարդիկ հոգևոր սննդի կարիք ունեն, ու ձեռնամուխ է լինում մի շատ կարևոր գործի: Բազում փորձերից հետո, երբ դեռ բլոկադան շարունակվում էր, օգոստոսի 9-ին բարձրախոսներով հնչում է Շոտակովիչի «Յոթերորդ սիմֆոնիան»: Գերմանացիները, լսելով այն, հայտարարեցին. «Մենք չենք կարող այս ժողովրդին հաղթել»:

1944 թվականի ամռանը Կորյուն Անանյանը գալիս է Հայաստան՝ հարազատներին տեսնելու, որոնք նորից հորդորում էին մնալ հայրենիքում, սակայն նա կրկին մեկնում է Լենինգրադ: Պարզևստիվել է «Լենինգրադի պաշտպանության համար» մեդալով: Մահացել է 1948 թվականին, ամփոփված է Սանկտ Պետերբուրգի Վոլկովսկի գերեզմանատանը:

Չորջանցելով այն փաստը, թե որքան է



կապված եղել իր ուսուցչի՝ Ալ. Սպենդիարյանի հետ՝ զեկուցող Նինա Հակոբյանը մի դրվագ է մեջբերում Կորյուն Անանյանի կյանքից:

1928 թվականի ապրիլի 29-ին էր՝ Կոր-



յունի ծննդյան օրը: Հավաքվել էին նրա ուսանողական ընկերները՝ ծաշակելու մոր պատրաստած համեղ ուտեստները: Չնայած հիվանդ լինելուն՝ ուսուցիչը չմերժեց սաների խնդրանքը՝ ներկա լինելու ծննդյան հավաքույթին: Բերեցին, ու նա մահից առաջ վայելեց իր ուսանողների ուշադիր ու հոգատար վերաբերմունքը: Շատ ուրախ էին բոլորը: Հաջորդ օրվանից սկսած՝ նրա առողջական վիճակը գնալով վատացավ, ու մեկ շաբաթ հետո կնքեց իր մահկանացուն:

Սա դեռ ամենը չէ ուսուցիչ-աշակերտ կապվածության մասին: Տարիներ առաջ, երբ Ալ. Սպենդիարյանը գրեց իր համարել «Ամաստ» օպերան, Թամարի առաջին դե-

րակատարը դարձավ Թամար Շահնազարյանը, որը Կորյուն Անանյանի զարմուհին էր:

Պրոֆեսոր Արմեն Բուդաղյանը վերջում շնորհակալություն հայտնեց Նինա Հակոբյանին (ի դեպ, նրա նախկին ուսանողուհին է)՝ մոռացության փոշուց Կորյուն Անանյանի կերպարը վեր հանելու այդ դժվարին գործը հանձն առնելու և ինքն էլ բլոկադայի, բռնատեղահանության դժվարությունների միջով անցած լինելով՝ այն պատվով կատարելու համար, մանավանդ որ զեկուցման ընթացքում նա երբեմն հուզական պոթելումներ էր ունենում: «Չգիտեմ՝ կա՞, արդյոք, այնպիսի մի դեպք, երբ ուսուցիչն իր վերջին օրն անցկացնում է սիրելի ուսանողների շրջապատում: Մենք չունենք լուսանկար, որ Սպենդիարյանը լուսանկարված լինի գործընկերների հետ, բայց կա իր ուսանողի՝ Կորյունի հետ: Ալ. Սպենդիարյանի հորելյանն էին նշում գործընկերները:

Նա նստած էր բազկաթոռին՝ ծով ծաղիկներով շրջապատված: Պետությունը որոշել էր նրա անունով կրթաթոշակ սահմանել, ու հարցին, թե ո՞վ պիտի առաջինն արժանանար այդ կրթաթոշակին, նա բացականչել է՝ իհարկե, նա՝ իմ Կորյունը»,- այսպես իր խոսքն ավարտեց Արմեն Բուդաղյանը՝ շնորհակալություն հայտնելով թանգարանի տնօրեն Մարինա Օթարյանին, որը սիրով ընդունեց իրենց առաջարկը և իրականություն դարձրեց այդ միջոցառումը, որը լավ ազդակ կլինի Սպենդիարյանի տուն-թանգարանը մոր հետաքրքիր նյութերով համալրելու համար:

Իր հերթին Մարինա Օթարյանն արժանվույնս գնահատեց այդ ծրագիրն իրականացնողներին՝ ասելով, որ սա եղավ սկիզբ, որպեսզի Ալ. Սպենդիարյանի հիշատակի օրվան նվիրված հաջորդ միջոցառումներին հնչեն նրա մյուս երկու երախտապարտ աշակերտների՝ իրենց ուսուցչի պայծառ հիշատակին գրած «Ազո քայլերգ»-երը՝ հաստատելով այն միտքը, որ ուսուցիչների հետ մեծարվում են նաև նրանց արժանավոր աշակերտները, նրանց հավերժացնելով՝ հավերժանում են նաև նրանց աշակերտները:

Չկա ավելի մեծ երջանկություն, քան այն, որ Ալ. Սպենդիարյանն ունեցել է արժանավոր բազում հետնորդներ, ու այդ ավանդույթները շարունակվում են այսօր:

Երկէջը՝
Սուրբայա ՂԱԶԱՐՅԱՆԻ

ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՂԱՅՏ

ՄԱՅԻՍԻ 17-ը՝ ԲԵՐՂԱՁՈՐԻ, 18-ը՝ ԼԱՉԻՆ-ԲԵՐՁՈՐԻ ԱԶԱՏԱԳՐՄԱՆ ՕՐ

1991թ. մայիսի կեսերին «Օղակ» ռազմագործողության շրջանակում խորհրդային 4-րդ բանակի և ադրբեջանական ՕՍՕՆ-ի միացյալ ուժերը շրջապատեցին Շուշիի շրջանի Բերդաձորի ենթաշրջանի 4 հայկական գյուղերը և անձնագրային ռեժիմի ստուգում կազմակերպեցին: Սովորական դարձած այս երևույթի ընթացքում միշտ էլ խուզարկում էին հայոց բնակարանները, կատարում ձերբակալություններ: Սակայն 1991-ի մայիսի 15-ինը հատուկ ծրագրով էր՝ հայաթափել այս տարածքը, որը Մայր հայրենիքին Արցախը կապող ամենամոտ տարածքներից էր: Այս ռազմագործողության ընթացքում թուրքերն առավել էին ոգևորվել՝ ստանալով Կրեմլի բարձր հովանավորությունը: Մեծ շեն գյուղում իր հղի կնոջը պաշտպանելու համար Անուշավան Գրիգորյանը կյանքով հատուցեց: Թուրքերը նրան իջեցրել էին նկուղ և զնդակահարել: Ձերբակալվեցին բոլոր տղամարդիկ, այդ թվում նաև Անոն Մկրտչյանը՝ Բերդաձորի ինքնապաշտպանության խորհրդի փոխնախագահը՝ Յին շեն գյուղի ֆիզիկայի ուսուցիչը: Մինչ Արցախյան շարժումը Անոն Գրիգորյանը ուսանելիս էր աչքի ընկել իր հայրենասիրությամբ և ՊԱԿ-ի ուշադրության կենտրոնում էր: Բերդաձորի պաշտպանության տարիներին՝ 1988-1991 թվականներին, տարածքի փաստացի հրամանատարն էր՝ գաղափարի մարտիկ, հզոր ոգու տեր: Ձերբակալված տղամարդկանց տարել էին Լաչին և Շուշի, ենթարկել խոշտանգումների: Կանանց, երեխաներին, ծերերին մի քանի օր պահել էին ահ ու սարսափի մեջ, թալանել և անցկացրել էին սահմանը, հասցրել Գորիսի շրջանի Տեղ գյուղ: Այստեղ այդ օրերին հանդիպեցի բերդաձորցիներին, մարտական ընկերներին: Պատմեցին արհավիրքի մասին: «Երեկոյան Երևան» թերթում այդ օրերին տպվեց իմ հեղինակած «Պայքարելու և ապրելու դաս» չուշացած ռեպորտաժը բռնազաղթվածների ծանրարից: Հետագայում տղամարդկանց ազատեցին, սակայն Անոնն ու Եղջահող գյուղից Հրաչ Պետրոսյանը, երեք ազատամարտիկ, որոնք մե-

ղադրվում էին ադրբեջանցի լրագրողուհու և խորհրդային զինվորականների սպանության մեջ, Բաքվում դատապարտվել էին գնդակահարության: Անոնն ու Հրաչը տանջամահ են արվել Բաքվի բանտերում, իսկ մնացած երեք ազատամարտիկները տարիներ անց ազատվեցին և տուն եկան: Անոնի դիակը հետ վերադարձրին, այսօր քաջորդին ամփոփված է հայրենի գյուղի հանգստարա-



նում: Հրաչը չունեցավ գերեզման: 1991թ. մայիսի կեսերին նույն ռազմագործողության ընթացքում հայաթափ արվեցին Հադրութի շրջանի 4 գյուղեր: Ուղիղ մեկ տարի Բերդաձորը մնաց գերության մեջ: Թուրքերը թալանեցին Հայոց բնակավայրերը, քանդեցին Մեծ շեն գյուղի մոտակա Պարին պիժ եկեղե-



ցիներից մեկը: Թշնամին հավատացած էր՝ արդեն տեր է նաև Բերդաձորին, և վերջ, Արցախն այլևս իրենն է: Սակայն բերդաձորից շատ ազատամարտիկներ շարունակեցին պայքարել թշնամու դեմ, մասնակցեցին Քա-

րին տակի հերոսամարտին, և ընդամենը մեկ տարի անց, Շուշիի ազատագրումից 10 օր հետո՝ 1992թ. ՄԱՅԻՍԻ 17-ին՝ Լիսազորն ազատագրելուց հետո, Հայոց ջոկատները մտան Բերդաձոր: Ազատագրվեց Հայոց ոստանը: Մյուս օրը թշնամին ճողոպրեց նաև Լաչինից ու Ջաբուղից: Մինչ այս՝ մայիսի 16-ին Գորիսի շրջանի Տեղ գյուղից Մելիքսեթ Պողոսյանի՝ Սյունյաց Մելոյի հրամանատարությամբ գործող ռազմական ջոկատը վերացրեց Տեղի և Լաչինի մեջտեղում գործող թուրքական ռազմական հենակետերից մեկը՝ «Թուրուսին խուր» կոչվող տեղանքում: Եվ 1992թ. ՄԱՅԻՍԻ 18-ին իրականացավ Արցախյան շարժման՝ մեր ժողովրդի երազանքը, կոչը՝ ՄԻԱՑՈՒՄ-ը:

Այդ օրից հետո ուղիղ երկու տարի շարունակվեց Արցախյան գոյամարտը: Ռազմի ծանփաներին ընկան բերդաձորից շատ ազատամարտիկներ, որոնց նվիրված հուշահամալիր կա Բերդոր-Ստեփանակերտ մայրուղու աջ կողմում՝ Եղջահող բարձրացող ծանապարհի մոտ: Լաչինի ազատագրումը Շուշիից հետո մեծ կարևորություն ունեցավ Արցախյան գոյամարտի հետագա ընթացքի համար: Վերջապես ցամաքային կապ հաստատվեց մեր հայրենիքի 2 հատվածների միջև:

1993թ. ծնունդի սկզբին, Հակարի, Ողջի գետերի ավազաններն ազատագրելուց և թուրքից մաքրելուց հետո, կայացավ պատմական որոշում՝ Արցախի Հանրապետության կազմում ստեղծվեց Քաշաթաղի շրջանը՝ Բերդոր (Լաչին) շրջկենտրոնով: 1994թ. գարնանը Բերդոր եկան շրջանի առաջին բնակիչները՝ ըստ տեղեկությունների՝ 13 հոգի: Տարիների ընթացքում շրջանում բացվեցին դպրոցներ, կայացան բնակավայրեր, նոր շունչ ստացան ազատագրված հայոց եկեղեցիները: Ստեղծվեցին բոլոր կառույցները, որոնք սպասարկում են ազգաբնակչությանը: Ամեն տարի մայիսի 18-ին մեծ շուքով տոնում էին Բերդորի ազատագրման օրը՝ որպես ՄԻԱՑՈՒՄ-ի խորհրդանիշ: 2020թ. կորոնավիրուսի պատճառով

չեղավ տոնախմբություն մեծ շուքով: Եղավ առավել ցավալին. սեպտեմբերի 27-ին արթնացան դարձյալ պատերազմի լուրով: Հաղթանակի հավատով մարտի ելանք: Կռվեցին հայոց քաջերը՝ դիմակայելով բազում անգամ ավելի քանակով ու զինված թշնամուն: Բայց, եղավ այն, ինչ կա այսօր.



թշնամին սկզբում տիրացավ մշտադադարա-կան Հադրութի շրջանին, Վարանդայի մեկի-քանիստ Ավետարանոցին, Շուշի բերդաքաղաքին և այլ տարածքների: Առավել ցավալի ու անթույլատրելի էր՝ պատերազմից օրեր անց առանց կրակոցի թշնամուն հանձնեցին Քաշաթաղի հյուսիսային տարածքը, որը պաշտպանեցին հերոսաբար, Քարվաճառը և Հայոց այլ տարածքներ: Եվ սա էլ եղավ Արցախի հայաթափման սկիզբը:

Նորից թերթում եմ արխիվս, լուսանկարներն են՝ 1989-ից մինչ օրերս: Պատերազմ ու խաղաղություն, տոնական ու հիշատակի օրեր, դարձյալ պատերազմ, հողագործություն ու շինարարություն, դպրոցներ, Հայոց հազարավոր հուշակոթողներ: Ստովի համ-դիպում մարտական ընկերներին, որ 1989-1994 թվականներին կարողացան հաղթել: Կա հույս, հավատ՝ Արցախը դարձյալ կընդունի իր զավակներին, մի պատմության ընթացքում մի քանի անգամ հայաթափված Բերդաձորում, Քաշաթաղում, Քարվաճառում, Կովսականում ու Քաշունիքում, Ակնա-յում ու Վայկունիքում կտիրի հայի շունչը:

Ջոհրաբ ԶՈՐՈՅԱՆ

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԻ ՑՈՒՑԱՀԱՆՂԵՍ՝ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻՆ

Մայիսյան եռատոնի առթիվ Գեղարքունիքի մարզի Մարտունու տարածաշրջանի Գեղ-հովիտ գյուղի մշակույթի կենտրոնում բացվեց «Ազգը՝ բանակ» խորագիրը կրող լուսանկարների ցուցահանդեսը: Հայոց բանակի օրվան նվիրված ցուցահանդեսը, որի լուսանկարները պատմում են սկսած 1989 թվականից մինչև ներկա

օրերը Հայոց բանակի մասին, առաջին անգամ բացվեց 2025թ. փետրվարի սկզբին «Թեքեյան կենտրոն»-ում: Մարտի 5-ին՝ Սպարապետ Վազգեն Սարգսյանի ծննդյան օրը, ցուցադրությունը շարունակվեց Արմավիրում գործող Տիգրան Մեծի անվան ռազմա-մարզական վարժարանում: Գեղ-հովիտում ցուցահանդեսը կայա-

ցավ մշակույթի կենտրոնի աջակցությամբ: Գեղհովիտ գյուղը դարե-րի պատմություն ունի, այդ են վկայում տարածքում պահպանված կիկ-լոպյան ամրոցները, հնադարյան այլ հուշարձան-ներ: Մեծ Հայրենա-կանին շատ գեղ-

Արցախյան գոյամարտին նույն-պես շատ գեղովիտցիներ մաս-նակցեցին: 1994թ. մարտին Օմարի լեռնանցքը պաշտպանելիս նահա-տակվեցին Արսենն ու Հարությունը: Հետագա խաղաղ տարիներին

շատ գեղովիտցիների առաջնա-գիծ տարավ: Ջոհվեց ժամկետային 4 զինծառայող, կա անհետ կորած: Մեծ Հայրենականի նահատակնե-րին նվիրված հուշակոթողի հարևանությամբ է նորօրյա Անմահ հերոսներին նվիրված խաչքար-կո-թողը, որի պատվանդանին գրված է. «Ի հիշատակ Արցախյան պատե-րազմում հանուն հայրենիքի ըն-կած նահատակների: Խոնարհվում ենք յուրաքանչյուրի առաջ»:

Եղավ հանդիսավոր մաս՝ ու-ղեկցված կենտրոնի սաների երաժշտական կատարումներով ու ասմունքով: Նշված հուշակոթողնե-րի մոտ ծաղիկներ խոնարհելուց հետո ներկաները հրավիրվեցին ցուցասրահ, որտեղ կենտրոնում զինվորական տեսարան է, իսկ պատերին լուսանկարներն են:



մար մղվող մարտերում, ծեր վեհ գործով կապրեք հավերժ սերունդ-ների սրտերում» արձանագրու-թյամբ:

Հայոց սահմանը պաշտպանելիս նահատակվեցին գյուղի տղանե-րից: 2020թ. սեպտեմբերի 27-ին սկսված պատերազմը դարձյալ

ԸՆԿԵՐՈՋ ԴԻՄԱՆԿԱՐ

ՓԱՅԼՈՂ ԱԶԲԵՐՈՎ ՓՈՔՐ ՄՇԵՐԸ



Արցախի պաշտպանության ու անվտանգության համար իրենց կյանքը զոհելու պատրաստ տղաներից շատերը կյանքից հեռացան անարդար ու անժամանակ՝ 2023թ. սեպտեմբերի 25-ի չարաքաստիկ պայթյունի զոհը դառնալով: Փոխգնդապետ Միքեյլ Եղուարդի Մուսայելյանը սեպտեմբերի 25-ին գտնվում էր Հայկազովի ՊԲ պահուստային բեմ-գալակայանի տարածքում՝ իր հայրենակիցներից շատերի մասն չիմանալով սպասվող աղետի մասին...

Ծնվել է 1985 թ. օգոստոսի 21-ին մայրաքաղաք Ստեփանակերտում: Սովորել է ավարտել է Ստեփանակերտի Ավ. Իսահակյանի անվան հ.10 դպրոցը:

Միքեյլ մեր համադասարանցին է, սովորել ենք մույն դասարանում 1992-2002թթ.: Մենք՝ համադասարանցիներս, մշտապես իրար հետ կապված ենք ամուր կապով՝ մեր հայրենիքում, մեր հայրենի Ստեփանակերտում, մեր հարազատ դպրոցում միասին սովորած լինելու անքակտելի կապով: Ամենկարգրելի է, թե այդ կապը որքան է դժվարացնում անցյալ ժամանակով Միքեյլի մասին խոսելը: Առավել դժվար է համակերպվել, որ կորցրել ենք ոչ միայն Միքեյլի պես քաջորդիներ, այլ նաև մեր հայրենիքը՝ Արցախը: Դպրոցական անհոգ տարիների հուշերն այն դրվագներն են, որ պահվում են մեր հիշողության գանձարանում: Միքեյլի մասին խոսել՝ նշանակում է խնամքով համել այդ գանձերից մի քանիսը, վերանայել ու վերապրել, եւ կրկին խնամքով պահել մույն տեղում՝ ժամանակ առ ժամանակ սրտի թելադրանքով վերհանելու համար:

Միքեյլ յուրօրինակ տղա էր: Դասարանում աչքի էր ընկնում ընկերասիրությամբ, հուժնորով, բարությամբ, հետաքրքրասիրությամբ: Հարգալից վերաբերմունք էր ցույց տալիս համադասարանցիների, առավել եւս՝ աղջիկների նկատմամբ: Երբեւէ ոչ մեկիս չէր վիրավորել խոսքով կամ պահվածքով: Հակառակը, երբ տեսնում էր, որ մեզանից ինչ-որ մեկը անտրամադիր է, փորձում էր կատակներով կամ զվարճալի պատմությամբ բարձրացնել տրամադրությունը: Սպորտային կազմվածք ուներ, հետաքրքրվում էր մարտարվեստներով, շատ էր սիրում մարտաֆիլմեր, երբեմն փորձում էր նմանակել մարտաֆիլմերի մեր սիրելի հերոսներին: Իրեն լավ էր դրսևորում ֆիզկուլտուրայի դասերին, սիրում էր «Ռազմագիտություն» առարկան, գեներների մասին դասերը: Ասում էր՝ նախընտրելի մասնագիտությունը հատուկ ջոկատայինի մասնագիտությունն է: Բավականին չարաճճի էր փոքր ժամանակ: Իր հասակակիցների հետ խաղում էր մեր մանկապատանեկան շրջանի ամենատարածված խաղը՝ «Կռիվ-կռիվ»: Մի անգամ էլ վնասել էր ձեռքը՝ խաղի ժամանակ պայթեցնելով չգիտենք որտեղից ձեռքում հայտնված պայթուցիչը: Դասի էր գալիս

վիրակապած ձեռքով, բայց չարաճճությունից միշտ փայլող աչքերով: Դասարանում երկու Միքեյլ ունեինք՝ Մուսայելյան եւ Պողոսյան: Չշփոթելու համար նրանց մասին խոսելիս անուններին կպցրել էինք «Մեծ» ու «Փոքր» ածականները: Քանի որ Մուսայելյանը համեմատաբար փոքր կազմվածք ուներ, նա «Փոքր Միքեյլ»-ն էր:

Տարիների հետ մեծացանք: Փոքր կազմվածքով, բայց մեծ սրտով Միքեյլը դարձավ հաղթանդամ ու լուրջ տղամարդ, ծառայությունը սիրող, հայրենիքի անվտանգությանը ծառայող, հայրենիքի արժանի ու նվիրյալ զավակ:

Միքեյլ Մուսայելյանն ավարտել է «Մեսրոպ Մաշտոց» համալսարանի «Ճարտարագիտություն եւ տնտեսագիտություն» բաժինը: 2003թ. ծառայության է անցել «Մարտունի 3» զորամասում, 2005-ին՝ զորացրվել:

Ծառայում էր ԱՀ ազգային անվտանգության սահմանապահ զորքերում: Ծառայության ընթացքում պարգևատրվել է մեդալներով ու պատվոգրերով:

Մասնակցել է ապրիլյան, 44-օրյա պատերազմներին, 2022թ. ՀՀ սովետներ տարածքում ընթացող ռազմական գործողություններին, 2023թ. սեպտեմբերի 19-ի պատերազմին:

2020թ. պատերազմի ժամանակ վիրավորվել է Ավետարանոց (Չանախչի) գյուղում, բուժում ստանալուց հետո վերադարձել է ծառայության:

Ծառայակից ընկերը հարգանքով է պատմում նրա մասին. «Կոլեկտիվում պարտաճանաչ, ընկերասեր տղա էր Միքեյլը: Նրան հարգում էին բոլորը: Գործին նվիրված էր, պարտաճանաչ: Սկզբում Միքեյլը հատուկ ջոկատային էր (ԱԾ), որոշ ժամանակ ծառայելուց հետո տեղափոխվեց Պետական պահպանության վարչություն, բայց վերջին շրջանում նորից տեղափոխվեց ու կրկին դարձավ հատուկ ջոկատային: 44-օրյա պատերազմի ժամանակ նա ԱԾ-ի հատուկ ջոկատային էր: Պատերազմական օրերին իրեն դրսևորել էր որպես իր մասնագիտության մեջ պրոֆեսիոնալ մարտիկ: Միասին, բայց տարբեր խմբերի ներքո ուղղորդվել էինք «Եղնիկներ» կոչվող կետ: Բոլորիս գործունեությունը տվյալ կետում այն էր, որ չթողնեինք թշնամին կտրել թիկունքը, քանի որ թիկունքը կտրելու դեպքում ողջ «Եղնիկներ»-ը կհայտնվեր շրջափակման մեջ: Որից հետո միասին Հաղթութում էինք՝ Սարիշենի հատվածում: Հետո Ավետարանոցում էինք, որտեղ էլ Միքեյլը վիրավորվեց: Բուժում ստանալուց հետո վերադարձավ մեր շարքեր: 44-օրյա պատերազմի վերջին օրերին մասնակցել է Շուշիի պաշտպանությանը: 2022թ. սեպտեմբերին, երբ տեղի ունեցան Ջերմուկի հայտնի դեպքերը, Արցախից օգնության գնացած ԱԾ-ի հատուկ ջոկատայինների խմբի մեջ էր նաև Միքեյլը: Հնարավոր է շատերը չիմանան, բայց հայտնի է, որ Միքեյլի նման տղաների շնորհիվ մեր հատուկ ջոկատայինները կարողացել են գերազանց կատարել իրենց առջեւ դրված խնդիրը եւ հետ վերցնել թշնամուն անցած 6-7 մարտական դիրք: 2023թ. մասնակցել է սեպտեմբերի 19-ի պատերազմին հատուկ ջոկատայինների կազմում: Իր գործին լավ էր տիրապետում, իսկ շրջապատում շատ հարգված էր: Ուներ փոխգնդապետի կոչում: Սիրում էր սպորտը: Հետաքրքրվում էր վիճակում մարտարվեստով: Եթե ժամանակը չէր հերիքում մշտական սպորտի պարապմունքների հաճախելու, մարզվում էր ինքնուրույն, կարողում էր համապատասխան գրքեր»:

Միքեյլն հաճախ չէր կարելի հանդիպել քաղաքում. ընկնված էր իր գործի՝ ծառայության մեջ: Վերջին շրջանում մի անգամ պատահական հանդիպեցինք: Իմ դիմաց բնավ այն աշխույժ ու արկածներ փնտրող տղան չէր, որի հետ սովորում էինք մույն դասարանում: Այժմ մարտաֆիլմեր մեր կյանքն էր, «Կռիվ-կռիվ» խաղ չէր, վնասվածքը հրազենային էր, հայրենիքն ու հայրենակիցներն իրական վտանգի մեջ էին... Անփոփոխ միայն նրա աչքերի փայլն էր, որ պատերազմների բոհով թրծված առնացի դեմքին, այնուամենայնիվ, նշմարվում էր:

Վերջին անգամ Միքեյլի հետ հեռախոսով խոսեցի 2022թ. ամռանը, երբ հանձն էի առել մեր դպրոցն ավարտելու 20-ամյակին նվիրված՝ համադասարանցիներով հավաքույթ կազմակերպել: Չնայած նրան, որ Շուշին ու Հաղթութը կորսված էին, Արցախի ապագան՝ անորոշ, բոլորիս մոտ մեծ ցանկություն կար հանդիպելու՝ կարելորելով ոչ թե ուրախ տոնակատությունը, այլ միմյանց հետ շփվելը, կարծես հասկանալով, որ կարող է այլես նման հնարավորություն չունենանք: Միքեյլը միանգամայն դրական արձագանքեց նման առաջարկիս, ծայրի մեջ ուրախություն կար, երբ պատասխանեց. «Ի՞նչ լավ բան ես մտածել»: Սակայն 20-ամյակին նվիրված մեր հավաքույթն այդպես էլ չկայացավ: Մեր հայրենիքը շարունակվում էր թշնամուն հանձնվել մաս-մաս: 2022թ. օգոստոսին հանձնվեց Բերձորը: Մեր տղաներից շատերը ծառայում էին ՊԲ շարքերում կամ Անվտանգության ծառայությունում: Հայտնի պատճառով նրանցից շատերը, այդ թվում եւ Միքեյլը չէին կարող ներկայանալ կազմակերպվելիք իրադարձությանը: Չկայացած միջոցառման ծրագրում ներառել էի ընթերցել պատերազմներին մասնակցած, հատկապես մեդալների արժանացած մեր տղաների անունները ու շնորհակալական խոսք ասել նրանց: Չէի պատկերացրել, որ ձեռք սեղմելու եւ անձամբ հայտնելու փոխարեն կներկայացնեմ Միքեյլ Մուսայելյանի մահախոսականը...

Դասընկեր Միքեյլ Պողոսյանը՝ «Մեծ Միքեյլ»-ը, մույնպես ջերմ հիշողություններով է կիսվում. «Միքեյլի հետ մտերիմ էինք, շփվում էինք միշտ: Սիրում էր դանակով աշխատել: Դանակներ նետելու նախասիրություն ուներ, յուրահատուկ հոբբի՝ կամ ինքն էր դանակ պատրաստում, կամ պատվիրում էր իր հավաքածուի համար: Սպորտը սիրում էր: Ե՛րբ էլ, պրոֆեսիոնալ սպորտով չէր զբաղվում, բայց մի ժամանակ ակտիվ մարզվում էր մարզասարքերով: Չէր ամուսնանում: Երբ կողքից շատ էի ստիպում՝ ժամանակ մի կորցրու, ամուսնացիր, ընտանիք ունեցիր, խոստովանում էր, որ աղջիկ է հավանել, բայց չգիտի՝ ինչպես մոտենա: Խոսում էինք, խորհուրդներ տալիս, որ դժվարն առաջին քայլն է եւ այլն, գլխով էր անում, որ հասկացել է, բայց այդպես էլ քայլ չէր անում: Խորը ափսոսանք ու ցավ եմ ապրում, որ մեր Միքեյլը այլես մեզ հետ չէ»:

Այսպիսին էր մեր Միքեյլը. հայրենիքի պաշտպանությանը նվիրված, անձնակա-նը ծառայությանը ստորադասող, ընկերասեր, փայլող աչքերով կատակներ անող Փոքր Միքեյլը:

Փոխգնդապետ Միքեյլ Մուսայելյանը զոհվել է Հայկազովի ՊԲ պահուստային բեմգալակայանի պայթյունի ժամանակ: Դեպքից 45 օր անց է հաստատվել ինքնությունը: Հուղարկավորված է Երեւանի Սիլիկյան գերեզմանատանը:

Սոնյա ԱՎԱԳՅԱՆ

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ՝ ՆԿԻՐՎԱԾ ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻՆ

«Երբ բառերը պակասում են, լուսանկարներն են սկսում խոսել... Այս ցուցահանդեսը լռությամբ կպատմի հայ զինվորի աննկուն կամքի ու հերոսական կերպարի մասին: Մեր հիշողությունը մեր ամենամեծ պարտականությունն է: Միացիր մեզ՝ պատվելու նրանց, որոնք կյանք տվեցին, որ մենք ապրենք», -իր խոսքում ասաց մշակույթի կենտրոնի աշխատակիցը:

Ցուցասրահի կարմիր ժապավենը կտրեց լուսանկարների հեղինակը՝ հայրս՝ ազատամարտիկ, լրագրող Ջոհրաբ Ըռքոյանը՝ մշակույթի կենտրոնի՝ նախկին զինվորական աշխատակցի հետ: Ցուցադրված է մոտ 300 լուսանկար՝ արված 1989-



2025 թվականներին: Նկարներում Բերդաձորի ինքնապաշտպանության խորհուրդն է, որի կազմում էր Մարտունու շրջանի ջոկատը, նաև գեղի-վիտիներ՝ Էդվարդ Ալախյան, Ջարգանդ Հախնազարյան, Ջոհրաբ Ըռքոյան, Տարոն Գրեյան, Անուշավան Սենեքերիմյան (հետագայում վախճանվել է հիվանդության պատճառով): Արցախյան առաջին գոյամարտի մասին պատմող լուսանկարներում Շուշին է, Բերդաձորը, Քաշաթաղը, Ավետարանոցը, ճարտարը, Ակնան, Վանքասարը և այլն: Հեղինակը պատմեց շատ հերոսների մասին, որոնք արդեն մեզ հետ չեն: 1996 թվականից բնակվելով Քաշաթաղի շրջկենտրոն Բերձորում՝ լուսանկարների հեղինակը տարբեր ժամանակներում, տարբեր պատճառներով այցելել է Արցախի ՊԲ զորամասեր, առաջնագիծ, և ներկայացված են այդ օրերի լուսանկարներ: 2014, 2015, 2016 թվականներին Քաշաթաղից շատ կամավորականներ են ժամկետային զինծառայողների հետ պաշտպանել Արցախի սահմանը: Շատ են այդ օրերի լուսանկարներ ևս. հեղինակը գեներալ գուգահեռ նաև լուսանկարչական խցիկն է օգտագործել: 2020թ. պատերազմի օրերի մասին մույնպես պատմող լուսանկարներ կան: Առանձին մի պատահալ նվիրված է Գագիկ Գինոսյանին: 2020թ. պատերազմից հետո արված լուսանկարներն արդեն մեր ստեղծված ռազմամարզական ճամբարների, վարժարանների սաների մասին են պատմում:

Ներկաները ծանոթացան ցուցադրությանը, կարևորեցին նման միջոցառումները՝ հիշողություն արթնացնող ու հավատ ներշնչող՝ կրկին հաղթանակներ ունենալու ենք:

Գեղիվիտի Ալ. Մյասնիկյանի անվան միջնակարգ դպրոցի տնօրեն, ազատամարտիկ Էդվարդ Ալախյանը, որը մույնպես առաջիններից էր, որ գեներ վերցրեց ու անցավ Բերդաձոր, շնորհավորեց ներկաներին տոնի առթիվ, կարևորեց ցուցադրությունը: Եղան շնորհավորանքի ու շնորհակալական այլ խոսքեր ևս: Ցուցադրությունը կշարունակվի մինչև մայիսի վերջը: Եղավ առաջարկ՝ լուսանկարները ցուցադրվեն նաև Մարտունի քաղաքում: Հեղինակի նպատակն է՝ հատկապես դպրոցականները, ուսանողներն ու երիտասարդները ծանոթանան Արցախյան գոյամարտի հերոսների մասին պատմող ցուցադրությանը: Ուրախ էր, որ մայիսի 9-ի ցուցադրությանը շատ էին հատկապես դպրոցականները:

Անահիտ ԸՈՌԵՅԱՆ

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

«ԻՆՔՆԱՄԱՔՐՄԱՆ ԽՈՐԱՆՆ Ե ԶԱՆԱԴԱՐԶԸ ԲԱՌԻ»

(Որերերտ Եսայան, Արյան համաստեղություն, Երզ, 2025թ.)

«...Իսկ ինքնությունն լռության քարե սահմանը հատել, Բարձրանում է վեր՝ միավորելով ոգին փրկության»:
Ռ. Եսայան

Ուրեց եղած-ներսում եռացող խոսքերի և խոհերի անսահման օվկիանոսի գրողի նախընտրած միակ ելքը՝ լռությունն է, որ հիմա հորդում է գրքի տեսքով, գուցե և անկասելի ծգտումն է դեպի լույսը, բայց անհերքելի է, որ այս ժողովածուն «չասված խոսքի շնչառությամբ» նրա վերելքն է՝ ամուր կառուցած արմատներին:

Խոհերը բառ-ազատատենչ թռչնակից սահուն անցնում են գրողի մեծագույն ապրումին՝ Հայրենիքին: «...Փաթաթվում են երկինքներով հայրենաբաղձ իմ հավքերի, // և բարձրանում ինքս ինձնից, ինչպես բառը՝ աղոթողից»: Սա նաև անցումն է ընդհանուրից մասնավորին՝ իրադարձություններ, որ մեծ աշխարհի անկասելի երթի հենքին են թանձրանում: Նրա՝ բառի, ինքնորոնման, հիշողության և խոհի փնտրտուքն անապայմանորեն անցնում է հայրենի կարոտ երակով՝ ճիշտ և ճիշտ համահունչ անցած ուղուն: Եվ երիցս ճշմարիտ է շարքի խորագիրը, թե՛ «Ազատ հոգին երազով գերակա է տակավին»: Արցախ, Շուշի, և միանգամից առնչակցումը՝ «հավատից ընկնում է մի խաչ հուշերի արյունոտ ծորում», բայց և զուգահեռ՝ «հավատից հնչում են երգեր, հառնում են խոյակ ու կամար»: Ասել է՝ եթե անգամ նրա երազը բաց վերք է, միևնույն է, հույսը չի մեռնում, որովհետև հար և միշտ «հրեշտակները երկիր են գալիս Արևի կառքով»: Արցախը՝ որպես սեր, որպես ապրում ու հավատ, որպես երկխոսության ակունք՝ բանաստեղծի և իր միջև: «Քո լույսը հող է և ունի կշիռ, // և քո անձրևը աստղատարափ է, // երկունքիդ լույսից այնպես երակվիր, // որ քո անցյալն ու գալիքը արբեն»:

Հայրենի հողը, ծգտումը լույսին և բառը ամենակարող. գրողն ինքն է խոստովանում է. «Բառ փնտրելով, գտնում եմ դուռ, // հոգու լույս ու ազատություն, // բողբոջներս բաց երկինք են աղոթողի...»: Ահա նրա տողերի հենքի թելերը, որ ոչ մի ակնթարթ չեն կորցնում պիրկ ոգին. չեն թուլանում երբևիցե, և տենչում է մարդը քառսի մեջ լույս, թե՛ «ցավի լույսով ե՛րզ են արարում»: Սա ակունքն է մղումի, բառի երկունքի տողը, ցավի արտահայտումը բանաստեղծորեն ու մարդկայնորեն, և գրողի ինքնությունը, որ ի վերջո բանաձևվում է՝ ներքին և արտաքին անընդմեջ պայքարի արդյունք որպես. «...լույսի բառերով կապույտ աղոթք է իմ ինքնությունը»: Եվ կրկին. «Գուցե արյունս ուխտատեղի է // երազի համար և թռչունների»:

Ընթերցողը ևս ակամա անցնում է հար և նույն ճանապարհը՝ հեքիաթի թևով, երազի բառով թե հիշողության. գրքում բոլոր տողերը և կառույցները պատկերավոր մտածողության ամփստելի պտուղներն են:

Եվ մայրերգություն, ու կարոտ այլևս անվերադարձ մանկության. «...նորս ծեռքն է համբուրում լուսալոյս և տարածվում, // սլանում է երկինքը կարոտներիս թևի տակ»՝ «Մայրս երգ է մրմնջացող, ժպիտ՝ հույսի կոպերով» խոսուն տողով, որ իր տրամաբանական շարունակությունն է ստանում արդեն հաջորդ՝ «Հիշողության ասուպներ» շարքում: Եվ ուրեց թե բավարար կլինի ընդամենը մեկ պատկեր՝ ներկայացնելու տողը հեղինակի տաք հուզապրումի. «...երբ հենվում էր հայրս մտքին, // ինչպես՝ բախին, // իսկ թևերը քշած մայրս՝ // լուռ խոնարհված իր տաշտածն // օրվա վրա, // վլանում էր // իմ խաղերը փոշեթաթախ // և հոգսերը իր տնակյաց, // կամ երփներանգ հանդարտությամբ //

ճնշում էր մի հիմն մտածումը», «Հորս ճակատին՝ երազի սահանք, // Աչքերում՝ հաստատ վճիռ կայծակի, // Նստում է թարին, քարը խորհում է, // ծեռքի անհամբեր ու տաք ծաքերում // երկար մնում է ճիշը սերմերի, // երկինքը կոպն է, խիղճը՝ բիրն աչքի, // հոգսը՝ մշտական աղոթատեղին»:

Ապա թե՛ «...Իմ կարոտն է դեռ երգում // շնչառությամբ նմների...», և երազ առ երազ արթնացող մանկության հուշեր, իսկ արդյունքում սահուն ու անխոչընդոտ ապահովվում է անցումը՝ կապը գրողի ու սեփական մանկության և հորիզոնը ճեղքող՝ դեռ անթագ արքա մի պատանու և... գրողի միջև. միանում են

ինչ մանկություն, ինչ տուն ու ճակատագիր՝ առանց Արցախ աշխարհի, անուն, որ մշտակա է գրողի տողերում. «Արցախը սկսվում է // ճառագայթներից... // Հորս վերնաշապիկը // ճառագայթից կախված // հորիզոն է»:

Հայրենի տան, մանկության հուշերի շարքը, ի դեպ, ամբողջացվել է շուրջ չորս և ավելի տասնամյակների ընթացքում, սակայն նշված փաստը միայն թվագրությամբ է արտահայտվում, իսկ բանաստեղծությունները միասին պոեմի արժեք ունեն ներքին կապի շնորհիվ, և տարիների ընդհատումի մասին խոսք լինել չի կարող:

...«Մի՛ շարժվիր. // իմ և քո շուրթերի միացման կետում // թռչնի բույն է հյուսվում». սեր կամ «Շշուկների երկինք» շարքը՝ «Ուզեցի բացել քեզ. // դու փակվեցիր, // ինչպես առեղծվածի վերք»՝ «Հավերժ բանալիով»:

Խոհի և փիլիսոփայության հիմքը «ճակատագիր երկու ափերի միջև» շարքն է, և առանցքում մարդն է՝ հայացքն անսահման տարողունակ իրականությանը՝ մեկիկ-մեկիկ և ամբողջական ընդգրկումով, և ըստ այդմ էլ՝ գրողի հայացքի ներքո տրոփում է իրականության և, անշուշտ, մարդու հետ կապված ամեն ինչ: Ինքնատիպ այդ մեկնակետին հեղինակը հասնում է քայլ առ քայլ. «...ես ապրում եմ, // թե՛ պարզապես հող են ցանում // բաց բիրերին տառապանքի», ապա՝ «Արդեն ճակատագրի միջանցքում եմ. // իմ միջով մտնում եմ // աղոթատեղի, // և բառերի միջև զորանում է // ազատությունս»,-վկայում է հեղինակը:

Ուշագրավ է ժողովածուն ամփոփող՝ «Արյան համաստեղություն» պոեմը՝ բաղկացած երեք

մասից՝ «Ինքնության անդրադարձներ», «Կյանքը շրջանակից դուրս», «Երազը դուռն է ժամանակի»:

Սա հատվածական մի մղումով ասես դնում է ասելիքն ամբողջացնող վրձնահարվածները՝ սրտի դուռը բախող արյան ընդհատ-ընդհատ մղումի պես: Սա երկարաշունչ բանաձևի բերված՝ գրողի մտածողության ամբողջական ուղեծիրն է՝ ներսից դուրս և երկնքից երկինք, թե՛ «ես ինձ չեմ շրջանցում: Ես ինձ հաղթահարում եմ արյան կաթիլներով, որոնք որոնող աչքերն են իմ ճանապարհի», ապա և շարունակում. «Իմ մենությունը պտտահողմ է: Ես իմ հիշողության երևացող մասն եմ: Իմ և իմ միջև սավառնում են հանգրվանները տիեզերքի: ... Ես առնչվում եմ տիեզերքի ելքին... Ես իմ ժամանակն եմ»:

«Ետ տար տողը՝ // կափարիչը քառսի, և կտեսնես՝ // ինչպես է ծնվում ճանապարհը...»: Մի կողմից՝ գրողի երկարունձիզ ճանապարհի նպատակակետը, հարկավ, ներդաշնակությունն է, որ երևում է որպես վրձնահարված՝ ոգու կտավին: Ինչ խոսք, լույսի թռիչքից ներշնչվող հեղինակին տրվել է ներքին դաշնը: Մյուս կողմից՝ մեր օրերի շունչն է որպես հեք ամենուր՝ տողատակում թե անթաքույց, հայի ճակատի գրից մինչև մեծ և փոքր տեղությունների՝ հոգևոր ու նյութական մրցավազ: Եվ իբրև բոլոր տեսակի տարակուսների ամփոփում՝ Նժդեհին ծնված քառատողն է և մոխրացած պատմության վերածնունդը. ինչ էլ որ լինի, Արցախից մինչև Անի, Շուշիից մինչև Գյումրի և մեծ հաշվով՝ Հայաստան, գծվում է վերագծվում է հույսը՝ հավատի, վերածննդի, հարության, ոգու ուժի և հաղթության մեկնակետերով, և ապրված տառապանքից լույս է ծնվում, լույս՝ երանելի և սպասված:

ԿԱՐԻՆԵ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
Բանասիրական
գիտությունների թեկնածու,
դոցենտ, ՀՀՄ անդամ

Որերերտ Եսայան

ԲԱՆԱՍՏԵՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ



Երբ ասելիքի հողմն է ծառս լինում պարիսպներն ի վեր՝ ձգտելով կախվել անհուն լռության սեզ զագաթներից, գաղափարի նոր թռչունն է փնտրում հայացքի քիվեր, հիշողությունը կանգնում է քարե ոտնաթաթերին:

Բացվում է մի դուռ բառերի միջև, և տարածությամբ փոթորկվում է սիրտն արագիլների, երազանքների դոփյունից հիմա ընկնում է մի թամբ, ճամփան է փրկվում սուր մագիլներից:

Եվ պսպղում է տողի ընդերքում աղբ անհայտի, բառերի համը հասունանում է նոր հաղորդությամբ, իսկ ինքնությունս լռության քարե սահմանը հատել, բարձրանում է վեր՝ միավորելով ոգին փրկության:

Սլանում են ասուպներս ավազն ի վեր հայացքների, մենակության անապատում սուրում է երգն՝ հանց փոթորիկ, փաթաթվում եմ երկինքներով հայրենաբաղձ իմ հավքերի և բարձրանում ինքս ինձնից, ինչպես բառը՝ աղոթողից:

Պատերն ի վար հոսող թախիծ, հրաժեշտի կապույտ լավա, տանս շենը կծկվել ցրտից, դառնում է մասն ավերակի, երազանքս կառչել ծառից և խշշում է որպես սավան. չե՛ս վտարի հայաստափ ինքնությունը մոլորակի:

Մի երկաթե վարագույրից կախված շեն է երկիրը այս, ուր պահվում է գահը, ինչպես գաղտնիքները գերեզմանում, կաստայական շրջագծով ներս ու դուրսը պարում են վախ,

և անհարկի կեղեքումից տանջահարն էլ չի զարմանում:

Քաշիր բռնակն հիշողության և մտիր ներս լույսի հանգույն, որ տրոփի քո կրծքի տակ խոլ թրթիռը հեռունների, բարձրանում է որքան օրը, նույն կետին է էլի հանգում. վարյակայ առաջ դու ազատվիր հոգու ցեց ու զեռուններից:

Հիշողության սահմաններից մինչև դարպասն ապագայի գերակա է երազի պես, երազի պես անհայտ մի կյանք, մեր ուղեղի ծալքերը խիտ ուղղորդվում են բախտով հայի, որ պարզ և աստվածային, որ պարզ և ու տառապանք:

Ի՞նչ լուսաբաց պիտի բուսնի քո թևերից, ի՞նչ հայրենիք, երկնքի և հողի միջև թաքտացող լույսն է համբույր, թո՛ղ Աստծո լեզվով խոսեն քարը, ծառը և հայն էլի, որ վիրավոր հողը ծաղկի, հորիզոնից բխի աղբյուր:

Երբ սահմանից այս կողմ եմ ես, անչափ մոտիկ սուրբ ակունքին,

և քառսը զգայական ալիքներին չի էլ ազդում, մտքի շղթան կտրատելով՝ ծնվում եմ ես, որպես հոգի, ներշնչանքի ափ եմ ելնում, իմ մեջ փնտրում երազի դուռ:

Եվ խորհուրդը այս լռության թևավոր է, ինչպես թռչուն, ներշնչանքն է բացվում իմ մեջ և աղոթքը՝ գտնում խորան, երազները միացնող սիրտ է դառնում ամեն հնչյուն, իսկ բառերը՝ ճգնակենցաղ հոգիների ապաստարան:

Ո՛վ է ստվերն իր քարշ տալիս իբրև պատյան ճակատագրի, հարվածի՞ց է նեղվում ճամփան, թե՞ անցողի քայլից անսեր. ինձնից, հարկա՛վ, չե՛մ խուսափի, ոչ էլ՝ մարտից համառ ու բիրտ, մի քայլ այն կողմ՝ պատմությունն է, մի քայլ այս կողմ՝ հաղթո՛ղն է տեր:

Այս դատարկը՝ անհայրենիք ու անհասցե անկյունաքար. և բառերը թոթափելով հազուստները տագնապների՝ ազատվում են անդամ վարքի շրջագծից այս մոլագար... Կյանքի՝ օրհնանք, զորությո՜ւն տուր զինվորածին արգանդներին:

ԳՐԱԿԱՆ ԱՐՑԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՇՈՒՇԻ

Մշուշի սապատին նստած՝ գնում են օրերը հիմա, և չկա ոչ մի բան հստակ. պահերից երկինք է ծորում, բախվում են ասուպներ հսկա արևոտ պատրանքի դիմաց, հավատից ընկնում է մի խաչ հուշերի արյունոտ ծորում:

Նահապետ պարսպի շնչում կարմիր է ստվերը քարի, խորանի երկինքը բաց է վերընթաց աղոթքի համար, զանգերի դողանքի միջով մի խաչ է ընդառաջ գալիս, հավատից հնչում են երգեր, հառնում են խոյակ ու կամար:

Տողը կանգնել թռչնի պես առավոտի ափի մեջ, բացում է իր թռիչքով հորիզոնը փետուրի. այդպես նրա երգերով անծայր եզերքն արթում է, ծյուղերն ի վեր սարսուռի ելնում է մի փոթորիկ:

Մեր աղոթքը արծի՞վ է, թե՞ խարույկ է մի անշեջ, վեհ ու ճերմակ ճախրանք է Շուշին լեռան թևերին, փրկե՛նք Կենաց մեր քայլը ճանապարհի ոգու մեջ, քանի լուսա՛յգ է ծորում հիշողության կեղևից:

Մոտենում են ինձ հաճախ նախնիներիս քայլերով՝ նրանց ոգուց քաղելով խորհրդավոր աստղի փայլ, նոր ամրոց են կառուցում հիշողության քարերով, ոտնահետքիս ջահերը լուսավորում են ճամփան:

Այնտեղ դեռ տող է գրում հրեշտակը առանց ինձ, հոգու բառերն այրվում են Տիրոջ կանաչ օրհնությամբ. անսանձ մտքերը պոկվում հիշողության առանցքից, ոգու ուժ են հավաքում արգելոցում լռության:

Հավատի երկրից աքսորյալներին տանում են դեպի տանջանքի հովիտ. կորցրել են եզերք, կորցրել՝ տուն ու տեղ, այս երկնքի տակ ինչ-որ կա թովիչ, գետի ջրերը ապսպրանք են, օրը՝ չորացած կեղև խնձորի, և խավարամած պատերի միջև միայն երազն է կայծկլտում նորից:

Մոմն է հալվում տենչերի չասվող խոսքի խորանում, հոգու լույսից կառչում են ստվերները մեղքերի, զարկերակով երազի ճանապարհն է գորանում, և ճախրում են բազեներ հիշողության ելքերից:

Ճանապարհը դարձել է վաղորդայնի խանձարուր, տողի շունչը գտնում է բառերի նոր մեղեդին, ճգնավոր է իմ հոգին ներշնչանքի անձավում, կարոտներն են զարդարում հիշողության եղևնին: Ժամանակը քարերին ցատկոտող մի թռչուն է, գալիս կտցում է ափիս հատիկները երազի.



կորցնո՞ւմ են, թե՞ գտնում- գիտի վերջի հնչյունը, դեռ ցուլում է մարգարիտն հիշողության ավազից:

Ոտնահետքդ չի՝ փրկի ճանապարհի դեմքն, ավա՛ղ, այս քառսից կմնա տառապանքի եզրագիծ, մագաղաթներ են ըմբոստ առապարները այրված, աստղի փշո՛ւր հավաքիր մեր նահապետ քարերից:

ՍԱՆՆԱ ՉԱՅՆԸ

Թռչունների հայացքը երկրամաս է աքսորյալ, երբ չի բացվում լեռների հորիզոնն իմ թևերում, հասցեները դռների մանուկներ են մոլորված, և փոխս գցած բարուր է այս երկինքը թերևս:

Անտարակո՛ւյս, պատանդ է ճանապարհը, բայց ոգին ծա՛ռս է լինում հավատի ժայռերն ի վեր շարունակ, ժամանակն էլ չգիտի նպատակը իր զորքի. ազատության արժիճից շղթա՞ ծուլի, թե՞ գնդակ:

Հայաստանն է իմ դիմաց՝ խաչմերուկը մեծ Ոգու, ճամփաները ՝ կորացած... մղձավանջի բեռներ են, ջուրը այստեղ փոթորկվել, ուռևկաններն է դուրս նետում, կափկափում են մութի մեջ աներևույթ դռները...

Դատարկվում են բառերի խորանները և մթնում, Տոհմածառն է արտասվում հայելու մեջ օրերի... Վառիր Ոգու կանթեղներ ազատարար այս երթում, Սասնա ծա՛յնն է բարձրանում ըմբոստության հորերից:

ԱՐՑԱՆ

Քո լույսը հող է և ունի կշիռ, և քո անձրևը աստղատարափ է, իսկ աղջիկներդ՝ հույսի նամակներ՝ ընկղմված բախտի ծրարների մեջ: Թե դու երակ ես և սիրո տանիք, քո արյունը հենց հիշողությունն է, որի ակունքը այն է,հայրենիք, որ մանուկներիդ պորտը կտրվի միայն տաքարյուն քո ազգանունից, և քո տառերում բացվող երկինքը թևը դուրս քաշի մոռացման վիհից: Քո լույսը հող է և ունի կշիռ, և քո անձրևը աստղատարափ է, երկունքիդ լույսից այնպես երակվիր, որ քո անցյալն ու գալիքը արբեն:

Օթևան է այս տողը ներշնչանքի և ոգու, մյուս տողը՝ արահետ,

հիշողության կայծակից ծիրան ու նուշ են պոկում և տերևներ հոտավետ: Անձրևների թմբուկով ներխուժում են ես անտառ՝ ազատվելով բառերից, զգվում են խոլ երգերով ու երազով իմ կայտառ մվագարան ծառերին: Հիշողության կեղևից կաթկթում է երկինքը, կախվում խոտի դողերից. այդպես գուցե դրվում է Աստծո պապակ կնիքը ներշնչանքի շողերին:

ԱՐՑԱՆԻ ԲԱՐԲԱՈԸ

Մանկագիր Գուրգեն Գաբրիելյանին

Մեր բարբառի ակից ջուր է խմել Աստված, լեզվի հրով հղկել դարձվածքները քարե և դարձրել բառը ո՛չ թե ոգու պատյան կամ հայացքի ծնծղա, այլ՝ զա՛հն ամենավեհ- մեր քարակոփ բարբառ, աստղահույս հորովել...

Հիշողության մատյան և քարերի աղոթք, ջրի զնգոց, հավքի թռիչք մթահալած և մեր հոգում քամված տառապանքի մրուր... լեռնաբազուկ այրաց համբերության քարայր... Հանիր շունչդ միրիից...

Մեր հին բարբառի մեջ էպոսներ կան քնած, ճամփաների ծոցում՝ միրիող արահետներ, որ թաթերը դրած ստինքներին երկրի՝ լույս են ըմպում՝ անսպառ կաթը Անսահմանի:

ՎԱՐԴԱՆ ՀԱԿՈՔՅԱՆԻՆ

Պատվանդանից իջնում են ներշնչանքի տողերը և միանում երկնքի անշրջանակ կտավին, որտեղ լույսի ակունք են անըջային դողերը, ազատ հոգին երազով գերակա է տակավին:

Բառի պարապ խայտանքը խևոտ տարածքն է կուռքի, գույնի խորքում գործում է զսպանակը լռության, երկու տողի արանքում թե շրջանակն է մութի, մեկուսարանը լքի՛ր, ապրիր որպես հոգու ծայն:

ԻՆՏՐԱՅԻՆ-ՏԻՐԱՆ ՉՐԱՔՅԱՆԻՆ

Քո տողերին հավողը ծառի սիրտն է փայփայում, ծիածանի թևերով հրճվում լեռան գագաթին, պտուկներին անձրևի ճառագայթներ են փարվում, վեր են ձգվում հասկերը շնչառությամբ երկնքի:

Համբույրներդ աղո՞թք են երազանքի ծնկներին, թե՞ զանգն ի վեր բարձրացող սրտի կարմիր դողեր են, զարնանալուր բույրեր են ճախրում լեռան ծերպերից, երկունքո՞վ են համարացել ավետարան հողերը:

Այս պարիսպը հետքերիդ համանվազն է քարե, բոցավառ է երկինքը հիշողության վառողով,

ծնծաղիկոտ քաղաքը լսողությունն է լարել. պատարագը սրբազան թևավոր է աղոթքով:

Նավահանգիստ բառերից շարժվել տողերը ոգուդ, որոնում են հենման կետ հորձանքներում երազի, անիրականն՝ իրական, չափանիշն է սողոսկուն, կենտ աստղեր են ցուլցում հորիզոնի ավազից:

ԽԱՉԻՎ ԴԱՇՏԵՆՑԻՆ

1. Պատվանդանի ստվերի տակ քանի՛- քանի՛ կուռք է ընկած, դիրքերն ի վեր մագլցում են նժույգները հիշողության. անդիմադիր խարույկը այս խրամա՛տ է, երա՞զ հանգած, գրչի ծայրին սարսռում է հորիզոնի աչքը անթարթ:

Մինչ աչքերն են թարթվում քարի, աղբյուրների երզը ցայտում և կախվում է ալիք-ալիք կտուցներից կարապների: Ծնվող տողը ելքն է հոգու: Ու գույները փարվում են քեզ հորիզոնի կտավներից բուրմունքներով տարափների:

2. Շնչառությամբ լույսերի փարվում ես դու ծառերին, շիթերի պես բխում են տողերն անհայտ բառերից: Երբ շոյում ես մրգերի շառագույնը քո ափով, ծյուղերն ի վեր ելնում է տերևների աղոթքը համանվազ սոսափով:

Ռանչպարների արշավը կայծակի պես անցնում է Սասնա ոգու քարափով:

ԿՈՒՌՔԻ ԱՆԿՈՒՄԸ

Ընկնում է դարի խաբկանքը կարմիր բառի աչքերից և զլորվելով իբրև կուռք և կամ մտքի նեխած միրգ՝ փոշի՝ է հանում, և հևհևելով մի ուրվական է քարշ գալիս ծանր և բացում ողբի պաշարներ անհայտ, որոնք կառչելով մահվան արձանին՝ ըմպում են հուշի կաթիլներ վիհատ:

Ըմպում են հուշի կաթիլներ վիհատ և վայրկյանների թամբերից կառչում, սուրում են դեպի ուղիներն անհայտ,- և փնտրում է այդ ուրուների չուն զոհասեղանը և զոհին դարի, որ արյան կաթիլ խմելով՝ սուրա դրոշի ծայրին կամ պատվանդանին ծառանա, որպես ահի կաղապար:

Դրոշի ծայրին կամ պատվանդանին նույն լռությունն է ու խորհուրդը նույն, և նույն հայացքն է՝ առագաստ կայմի, նույն երազանքն է ու թիրախը նույն- մարդը հավատի պատերը քանդում և կորչում է դեռ իր աղոթքից դուրս, հետո... գտնում է կարոտի անդունդ, հետո... տենչում է քառսի մեջ լույս...

Ընկնում է դարի խաբկանքը կարմիր բառի աչքերից և զլորվելով, իր ետևից դեռ կյանքն է քարշ տալիս, այս կյանքը անդեմ ու նորահողով, որ ընկած կուռքի քղանցքը լիզում և երազում է երկաթե մի ձեռք, կարմիր սահանքներ ու խղճի կիզում, որ դեռ չի տեսել երկրագունդն այս ծեր:

ԳՈՅԱՏԵՎԱՆ ԲԱՆԱԶԵՎ

ՇԱՏԱՅՆԵՆՔ ՄԵՐ ԱԶԳՈՒ, ԱՄԵՆ ՏԵՂ ԼԻՆԵՆՔ ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆ



Զարինե Արզումանյանը ծնվել է 1996թ. հուլիսի 14-ին Ստեփանակերտում: Ավարտել է Սախարովի անվան հ.8 ավագ դպրոցը: Սովորել է ԱրՊՀ-ում «Ֆինանսներ» մասնագիտությամբ: Դեռ ուսանողական տարիներին համատեղում էր ուսումնառությունը հետո էլ շարունակեց աշխատել «Օրիֆլեյն» շվեդական կոսմետիկայի գրասենյակում՝ որպես օպերատոր: Որակյալ կոսմետիկա արտադրելու գիտելիքներին ծանոթ էր: Համադրելով հոր՝ Արամ Ավագյանի բուժական հմտություններին հետ՝ արցախյան օժանդակ էր պատրաստում բնական հումքեր: 2019թ. համադրվում է Արթուր Արզումանյանին, ամուսնության ամառը ստանում նրանից: Արթուրը գին-ծառայող էր, քիչ ժամանակ էր կարողանում հատկացնել իրենց համադրվածներին: Չարինեին դուր էր գալիս Արթուրի հոգատարությունը, նրա հայրենասեր, խիզախ բնավորությունը: Արթուրը սիրում էր Ջարիների ամեն մի հատկություն՝ նրա հայկական գեղեցկությունը, ոգու ամրությունը: 2020թ. օգոստոսի 18-ին կատարվեց նրանց նշանդրերի արարողությունը, որին պետք է հաջորդեր օրինական ամուսնությունը եւ ավանդական հարսանիքի ուրախ տոնակատարությունը: Հազարավոր երիտասարդների պես նրանք էլ իրենց ծրագիրն ունեին, թե ինչպես պետք է կազմակերպեն իրենց կյանքի ամենալուրջ ու կարեւոր քայլերից մեկը: Սակայն նրանց դեռ այլ ճանապարհ էր սպասում՝ պայթյալ Արցախի ազատության համար, Արցախի հողում ապրելու իրավունքի համար՝ չմտածելով, որ երբեք չհնարավոր է Արցախը թողնել ու բռնատեղահամվել:

Սեպտեմբերի 27-ին սկսվեց չարաբաստիկ 44-օրյան...

Հայրենի հողի իսկական զավակ Արթուրը, հասկանալով, թե ինչ վտանգ է սպառնում հայրենիքին ու հայրենակիցներին, անհապաղ մեկնեց զորամաս: «Դու ուժեղ ես եւ պետք է ողջ մնաս, մեզ դեռ շատ ու շատ լավ պահեր են սպասվում», հուսադրում էր լավատես Ջարինե: Պատերազմի ժամանակ Արթուրը՝ որպես հրետանավոր, գերազանց կատարել է իր մասնագիտական պարտականությունները եւ մարտերի ժամանակ իրեն դրսևորել որպես Հայոց բանակի արժանի սպա: Պարգևատրվել է «Արիության համար» մեդալով:

Պատերազմն ամեն ինչ փոխեց, բայց չփոխեց Արցախում ապրելու, ընտանիք կազմելու եւ հերոսների արյամբ պահած

սուրբ հողի ապագա պաշտպաններ ունենալու եւ դաստիարակելու՝ Արթուրի ու Ջարինեի անսասան կամքը: Ամիսներ շարունակ Ջարինեն ու Արթուրը մտածում էին, որ իրենց երազած հարսանիքն ու պսակադրությունն արդեն անհասանելի դարձած Ղազանչեցու մայրուհի երազ է մնացել: Ընտանիք ստեղծելու որոշման մեջ աներկբա զույգն ամուսնացավ 2021թ. հունիսի 21-ին՝ կարեւորելով ոչ թե արարողությունը, այլ օրինականացումը: 2022թ. մայիսի 5-ին ծնվեց նրանց առաջնեկը՝ Ալեքսը:

Տեսական ժամանակ Արցախը գտնվում էր թշնամու կողմից ծրագրված շրջափակման մեջ: Արթուրը դիրքերում էր՝ պատրաստ ծառայել հայրենիքին հանուն նրա լուսավոր ապագայի, իսկ Ջարինեն ստիպված էր շրջել բոլոր դեղատներն ու խանութները երեխայի համար անհրաժեշտ սնունդը գտնելու համար... Սակայն պատկերը փոխվում էր օրեցօր, դժվար էր հուսակոտոր չլինել անգամ իրենց հողին ամուր կառչած Արցախի զորավոր ընտանիքների համար: Ջարինեն վերհիշում է այդ ծանր օրերը եւ կիսվում մեզ հետ:

«Սննդի խնդիրը սկզբնական շրջանում այդքան էլ սուղ չէր, քանի որ բանջարեղենը եւ այլ մթերքներ հասցնում էր սկեսուրս իրենց գյուղից: Ճիշտ է, քիչ էր, բայց մի կերպ կարողանում էինք բավարարվել: Տազնապային էի, մոտս վախ կար, որ սնունդը թեկուզ լիարժեք չէ, բայց եթե դա էլ սպառվի, ինչ էինք տալու երեխային: Ճիշտն ասած՝ մինչեւ հիմա էլ այդ վախը մոտս պահպանվել է ու չի անցնում: Օր - օրի ահագնանում էր վտանգը, անգոր ինքն զգում մեզ: 2023թ. սեպտեմբերի 19-ին ամուսնուս ու նրա գին-վորական եղբայրներին կանչեցին զորամասեր, նրանց հետեւից եկան գինվորական մեքենաներով: Տազնապային սովոր էինք, բայց այս անգամ ամեն ինչ ավելի լուրջ էր: Լսվեց պատերազմի բոթը ազդարարող մահաբեր ձայնը: Ստեփանակերտի փողոցներով մարդիկ խուճապահար վազում էին: Ես տանն էի երեխայի հետ: Շուտով եկավ եղբայրս, արագ քայլերով մեզ տարավ պատսպարվելու մերձակա ապաստարանում: Հագիվ էի դիմանում՝ չորս կողմից սարսափելի լուրեր լսելով: Մեր տղաներից տեղեկություն չկար: Ահասարսուռ ժամեր սպանեցինք, պատերազմի ձայները լռեցին, գրեթե բոլոր թաղամասերից լսելի դարձան լացն ու սուգը: Գծվել կարելի էր: Ամուսնուս մասին լուր չունեի: Սեպտեմբերի 20-ի կեսօրին միայն մա եկավ՝ մեկ օրվա մեջ հյուծված, շատ տխուր: Նրա պատմածից հասկացա, որ մի կերպ են դուրս պրծել թշնամու ճիրաններից: Նրա կրտսեր եղբայրներն էին դարանակալած թշնամու շրջապատման մեջ հայտնվել Դրմբունում ու Հաթերքում: Սպասումի դաժան ապրումների մեջ էինք, իսկ Ստեփանակերտը ժամ առ ժամ դատարկվում էր: Մարդկանց մի մասն արդեն դուրս էր եկել Արցախից, մի մասը ճանապարհին խցանումների մեջ էր:

Փառք Աստծո, տղաները ողջ դուրս եկան շրջափակումից ու հասան տուն՝ թեւեւ հյուծված, վիրավոր, հոգեկան ծանր ապրումների մեջ: Թվում էր, թե մղձավանջն ավարտվել է: Բայց առջեւում բենզալցակայանի չարաբաստիկ պայթյունն էր ու բռնի տեղահանվելու հոգեմաշ ճանապարհը: Երբ հայտնեցին, որ Հայկազովի բենզալցակայանից բենզին ստանալու հնարավորություն կա, ամուսինս իր երեք եղբայրների հետ, հայրս ու եղբայրս գնացին բենզին ստանալու: Ահավոր խցա-

նումների ու հերթերի միջով անցնելուց հետո երբ տեղ հասան, պայթյունն արդեն եղել էր: Վերադարձան ու պատմեցին, թե ինչ սարսափազդու տեսարան էր Հայկազովում:

Բենզին այդպես էլ չկար, ստիպված էինք թողնել մեր մեքենան ու դուրս գալ ինչով կստացվեր: Մեր գրկին էր մեկ տարեկան Ալեքսը, որը նույնպես իր վրա զգաց Արցախից հեռանալու դառնությունը: Դժվար էր գաղթի ճանապարհը՝ խցանումներով, դժբախտ պատահարներով լեցուն: Երկու օր ճանապարհին հալումաշ լինելով՝ հասանք Գորիս, որտեղից պետք էր, որ մեզ ուղղորդեին որեւէ մի տեղ, սակայն ասացին, որ բոլոր տեղերը զբաղված են: Մնում էինք մեքենաների մեջ՝ մինչեւ որ կացարան կգտնվեր:



Միակ տարբերակը սահմանափակ Որոտան գյուղի հյուրատունն էր, որտեղ ստիպված մնացինք:

Ծանր էր այդքանը տեսած ու ապրած մարդկանցս համար բնակվել սահմանափակ գյուղում: Ավելի ու ավելի էինք նեղսրտվում, բայց մեզ հանգստանալ էր պետք: Ամենուրեք տան վարձերը թանկ էին, խաբեությունները՝ շատ: Որոշեցինք տեղափոխվել Գյումրի, որտեղ մեծ դժվարությամբ բնակարան վարձեցինք ու հաստատվեցինք: Դժվար էր համակերպվել իրողության հետ: Արցախից հետո ամեն տեղ մենք մեզ օտար ենք զգում: Մենք մեր հայրենիքում համարվում ենք փախստական, իսկ հայրենիքից դուրս՝ փախստական չենք: Դժվարություններ կան ֆինանսների հետ կապված, աշխատանքի առումով: Շատ աշխատավայրեր աշխատանքի չեն ընդունում արցախցիներին: Իսկ որոշ տանտերեր տուն չէին տալիս վարձակալության համար, եթե երեխա կա ընտանիքում: Փոխանակ լինեի հակառակը: Իհարկե, բոլոր տեղահանված ընտանիքներն էլ խոցելի են, բայց մի՞թե կարելի էր մերժել այսքան տառապանք տեսած ու փոքր երեխան ծնեքներին՝ անտուն մնացածներին: Իհարկե, շատ բարի ու կարեկցող մարդկանց էլ ենք հանդիպել, բայց քիչ չէին մատչել, որ փորձել են մեզանից գումար կորզել խաբեության ճանապարհով: Նոր բնակավայրում դժվարությամբ ենք հարմարվել, քանի որ ոչ մի կերպ չէր ստացվում ընկալել մեզ հետ կատարվածը, եւ որ այլեւս հետ չենք գնալու:

Արցախցիների համար այս դժվարին օրերին շատ կարեւոր է գինվել համբերությամբ, լինել տոկուն, չհուսահատվել եւ միմ-

յանց հանդեպ լինել ավելի քեր ու ներողամիտ: Արցախցի շատ ընտանիքներ, բռնատեղահանվելուց հետո խուսափում են երեխաներ ունենալուց, հատկապես եթե ընտանիքում արդեն երեխաներ կան: Անշուշտ, կարելի է նրանց հասկանալ՝ հաշվի առնելով սոցիալական, հոգեբանական եւ ի վերջո՝ առաջացած առողջական խնդիրները: Մեզ ուզում են հուսահատեցնել, բայց մենք չենք ընկճվում՝ փորձելով արժանի պատասխան տալ այս մարտահրավերին նույնպես: Չարինե եւ Արթուր Արզումանյանները չընկճվեցին, չվախեցան պատերազմից ու բռնատեղանումից հետո ծանր շրջանում նոր կյանքի ծիլեր արձակել: Մեր ազգը այսպես է գոյատևել. պատերազմների ժամանակ էլ կատարվել են պսակադրություններ, ազատամարտիկներ են ամուսնացել, կանայք են հղիացել ու ծննդաբերել, ինչն էլ դարձել է հաղթանակների գրավականն ու վաղվա հաղթանակների հիմքը:

«Երկրորդ հղիությունս պլանավորված չէր: Անակնկալի էինք եկել՝ լուրս իմանալով: Տարբեր մտքեր ունեի, որ գուցե հիմա դրա ժամանակը չէ: Տուն չունեմք: Իրավիճակը՝ անորոշ: Մեր կարգավիճակը՝ անհասկանալի: Խնդիրներն էլ՝ մի կողմից: Մտածում էի, որ հղիությամբ պայմանավորված՝ չէի կարողանալու աշխատել, ընտանիքի ողջ ֆինանսական բեռը թողնելով ամուսնուս վրա: Նոր երեխան պահանջում է նոր ծախսեր: Անհանգստանալու տեղիք էին տալիս այդ մտքերը, բայց, այնուամենայնիվ, որոշեցինք, որ երեխան Աստծո պարգև է, պետք է լույս աշխարհ գա:

Գաղթի ճանապարհին տեսնում էի բեռնված ավտոմեքենաներ. մարդիկ իրենց հետ հանել էին՝ ինչ կարող էին, իսկ իմ մտքում միայն այն էր, որ Աստված փրկել է մեզ, որպեսզի շարունակենք ապրել: Իմ հարստությունը իմ ընտանիքն է, ուրեմն պետք է հավաքել ուժերը եւ շարունակել ապրել: Ահա 2025թ. հունվարի 2-ին ծնվեց մեր աղջիկը՝ Սառան: Բոլոր դժվարությունները հաղթահարվում են հավատի շնորհիվ: Մենք հավատում ենք, որ կկարողանանք հաղթահարել մեր առջեւ ծառացած բարդությունները: Մենք ունենք իրար, մենք ունենք երեխաներ, ինչը մեզ մոտիվացնում է: Փառք Աստծո, աշխատունակ ենք, կկարողանանք աշխատել, հոգալ կարիքները: Ինչքան էլ հոգեպես կոտորված ենք, պետք է կարողանանք մեր տրամադրությունը նորմալ պահել հանուն մեր երեխաների: Որքան էլ անցանկալի, բայց սա է մեր իրականությունը, պետք է ընդունել ու շատացնել հայ ազգը, նպաստել, որ մեր սերունդը լինի կրթված, կոփված, որ ամեն տեղ հայերը մեծամասնություն կազմեն».- ասում է Ջարինեն եւ երեխաների միջազգային օրվան ընդառաջ մաղթում հետեւյալը.-«Հմորհավորում եմ բոլոր երեխաներին իրենց տոն օրվա առթիվ: Մաղթում եմ, որ բոլոր մանուկները մեծանան առողջ, անհոգ, երջանիկ, վայելեն իրենց մանկությունը խաղաղ ու բարեկեցիկ երկրում՝ ուրախացնելով իրենց ծնողներին: Իսկ մեծահասակներին ցանկանում եմ ասել, որ փորձեն կյանքին նայել մի քիչ էլ երեխաների աչքերով: Ըստ իս՝ դա մատչելի մեծահասակների տոնն է, քանի որ մեր կյանքի ու գործունեության իմաստը, մեր գործի ու ավանդույթների, գեների շարունակողը հենց երեխաներն են: Մեր պարտքն է, որ մենք լավ միջավայր ու երկիր ստեղծենք, որտեղ նրանք ապրելու են անվտանգ, խաղաղ ու ապահով»:

Սոնյա ԱՎԱԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԽԻՎ ԽՍՀՄԱԳԻՐ՝ Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ	Հիմնադիր՝ «Լուսարար» կրթամշակութային ՀԿ	✉ p.երևան, Անտառային փ. 188/16 ☎ 097-22-38-27 E-mail: gorcort@mail.ru: www.lusarar.info	Մեջբերումների եւ փաստական տվյալների ստույգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում: Թերթը վաճառքի ենթակա չէ:	Տպագրվում է «Լիմուշ» ՍՊԸ տպարանում: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ: Տպաքանակ՝ 500 Ստորագրված է տպագրության՝ 23. 05. 2025թ.:
--	--	--	--	--